

03
ՄԱՐՏԻ
2020



ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՃԻՆ
ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆՍԻՐՈՒԹՅՈՒՆ
(2018-2019ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ)

**Ներդրումների աճին ուղղված ՀՀ կառավարության
 գործունեության ուսումնասիրություն**

(2018-2019թթ. ժամանակահատված)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	1
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
ՄԱՍ 1. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	4
1.1. Ներդրումների էությունը, օտարերկրյա ներդրումները, ներդրումների տեսակները	4
1.2. ՀՀ ներդրումային հոսքերի վիճակագրության համառոտ վերլուծություն	6
1.3. ՀՀ կառավարության խոստումները, դրանց իրականացման հնարավորությունները, միջազգային փորձը և խոստումների իրականացման արդյունքները	14
1.3.1. Միջազգային վարկանշային ինդեքսներ	15
1.3.2. Հարկային և մաքսային ոլորտ	17
1.3.3. Պետություն-մասնավոր գործընկերություն	19
1.3.4. ՀՀ ներդրումային միջավայրը կարգավորող օրենսդրաիրավական դաշտ և ներդրումային քաղաքականություն	20
1.4. Ամփոփում (միջանկյալ եզրակացություններ).....	26
ՄԱՍ 2. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	28
2.1. Ներդրումների խթանմանն ուղղված խոստումները, դրանց իրականացման հնարավորությունները, միջազգային փորձը և խոստումների իրականացման արդյունքները	28
2.1.1. Ներդրողների հետ աշխատանքներ	29
2.1.2. Ֆինանսական և ոչ ֆինանսական գործիքակազմ	31
2.1.3. Ներդրումներին աջակցող պետական կառույցները և իրականացված քայլերը	33
2.1.4. Երկրի ճանաչելիության բարձրացում	37
2.2. Ամփոփում (միջանկյալ եզրակացություններ)	38
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	40

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵՄ	Եվրոպական միություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿԱԶՀ	ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողով
ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
ՊՎԾ	Պետական վերահսկողական ծառայություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓՄՁ ԶԱԿ	«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ՖՄԱԶԾ	Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի ապրիլ-մայիսյան քաղաքական իրադարձություններից հետո ՀՀ նորաստեղծ կառավարությունը հայտարարեց «տնտեսական հեղափոխության» մեկնարկի մասին, որի առանցքային բաղադրատարրերից մեկը ՀՀ ներդրումային միջավայրի բարելավումն է, միջազգային ներդրումային դիրքի, գրավչության բարձրացումը և դեպի ՀՀ ներդրումային խոշոր հոսքերի ապահովումը:

Ցանկացած տնտեսական համակարգում տնտեսական կայուն աճի և երկարաժամկետ տնտեսական զարգացման հիմքը կատարվող ներդրումներն են: Արդի պայմաններում առավել ակնհայտ է դառնում ՀՀ տնտեսությունում մեծածավալ ներդրումների ներգրավման անհրաժեշտությունը:

Ներդրումների աճի ապահովմանն ուղղված ծրագրային մոտեցումներն իրենց արտահայտությունը գտան 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններում ՀՀ քաղաքացիների մեծամասնության աջակցությունը ստացած «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում¹ և ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին»² փաստաթղթում:

Թղթի վրա արտահայտություն գտան, բայց արդյո՞ք դա հենց այն էր, ինչ պետք էր մեր տնտեսությանը զարգացման այս փուլում, և արդյո՞ք գրվածը կյանքի կոչվեց ու իրականացվեց: Վերջիվերջո ի՞նչ արվեց:

Սույն վերլուծությամբ փորձ է կատարվում պատասխանել վերոհիշյալ հարցերին: Նպատակն է՝ վերլուծել խոստացված և այդ ուղղությամբ իրականացված քայլերը, հասկանալ՝ արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունը ճիշտ ուղղությամբ կամ պատշաճ տեմպերով է շարժվում ներդրումներ ներգրավելու հարցում:

Հարկ է նշել, որ ներդրումների աճն ապահովելու համար միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցումն է բարելավել երկու ուղղություն՝ ներդրումային միջավայրն ու ներդրումների խթանման գործիքակազմը և ինստիտուտները (կառույցները): Սույն աշխատանքն իրականացվել է վերոհիշյալ ուղղությունների մասով:

Այսպիսով, վերլուծությունը կատարվել է հետևյալ տրամաբանությամբ և կառուցվածքով. սկզբում նկարագրվում են ներդրումների էությունը, տեսակները, ՀՀ-ում օրենսդրորեն կամ պրակտիկայում կիրառվող հասկացությունները և հաշվարկման մեթոդաբանության որոշ առանձնահատկություններ: Այնուհետև ներկայացվում են վերջին տարիների վիճակագրական տվյալները՝ շեշտադրելով մինչև 2018 թվականի իշխանափոխությունը և դրանից հետո ընկած ժամանակահատվածները: Ըստ ներդրումների աճին նպաստող ուղղությունների՝ ուսումնասիրվել են ՀՀ

¹ <https://www.civilcontract.am/news/im-qayl/im-k-ayle-dashink-i-nakhentrakan-tsragire>

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128281>

կառավարության խոստումները, դրանց ուղղությամբ կատարված քայլերը: Կարճ անդրադարձ է կատարվել նաև ներդրումները խթանող միջազգային փորձի տեսանկյունից ՀՀ կառավարության խոստումների իրատեսականությանը և հիմնավորվածությանը: Վերջում ամփոփվել են վերլուծության արդյունքները և կատարվել համապատասխան եզրակացություններ:

Կարծում ենք, որ սույն աշխատանքը որոշակի լույս կսփռի տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկում վերջին տարիների զարգացումների վրա:

ՄԱՍ 1. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1. Ներդրումների էությունը, օտարերկրյա ներդրումները, ներդրումների տեսակները

Նախքան բուն վերլուծությանն անցնելը, հարկ ենք համարում մի փոքր անդրադարձ կատարել ներդրումների էությանը, տեսակներին և հաշվարկման մեթոդաբանության համառոտ ուսումնասիրությանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաճախ (դեպքերի 80-90%-ում) հասարակական, քաղաքական կամ այլ գործիչները, անգամ պատասխանատու պաշտոնյաները ներդրումների, մասնավորապես՝ վիճակագրական տվյալների մասին խոսելիս հստակ չեն պատկերացնում կիրառվող մեթոդաբանությունը:

Մեծ առումով ներդրումը ռեսուրսների ուղղումն է հավելյալ արժեքի ստեղծմանը: Ժամանակակից տնտեսագիտությունում հաճախ նույնացվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «կապիտալ ներդրումներ», «ներդրումներ», «կապիտալի կուտակում», «ինվեստիցիա»: Սակայն հիմնականում «ներդրում» հասկացությունը ասոցացվում է հիմնական կապիտալի մեծացմանն ուղղվող կամ արտադրական բնույթի ծախսերի հետ:

Այս աշխատանքի շրջանակում նպատակահարմար չենք համարում ներկայացնել բոլորին հայտնի տեսական դրույթներ ներդրումների մասին՝ նաև այն պատճառով, որ տեսական գրականության մեջ տարբեր մոտեցումներ են առկա: Ավելի մեծ ուշադրություն ենք ցանկանում հրավիրել պաշտոնական վիճակագրության մեջ օգտագործվող հասկացությունների, չափման մեթոդաբանության և որոշ ցուցանիշների տնտեսագիտական բովանդակության վրա (որոնք, բնականաբար, նույնպես ունեն տեսական հիմքեր):

Ըստ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի՝ **օտարերկրյա ներդրում** է համարվում գույքի ցանկացած տեսակ, այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ, որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է ՀՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով³:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների պաշտոնական վիճակագրությունը վարում է ՀՀ վիճակագրական կոմիտեն՝ համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից առաջարկված վճարային հաշվեկշռի 6-րդ հրատարակության: ԱՄՀ մեթոդական պահանջներին համապատասխան՝ վճարային

³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872>

հաշվեկշռի ֆինանսական հաշվում ակտիվների և պարտավորությունների հաշվառումն իրականացվում է ակտիվների զուտ ձեռքբերում և պարտավորությունների զուտ ստանձնում ցուցանիշներով: Վերջինս ներկայացնում է Հայաստանում օտարերկրյա ներդրումների ներհոսքը, որտեղ զուտ տերմինը նշանակում է ավելացումներից հանած տվյալ ֆինանսական գործիքի գծով մարումները:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից օգտագործվող մեթոդաբանության⁴.

Ներդրումը գործարք է, որի արդյունքում մի կազմակերպությունում առաջանում են ֆինանսական պահանջներ կամ պարտավորություններ (ներառյալ՝ կազմակերպության կապիտալում մասնակցության մասով)՝ այլ կազմակերպության նկատմամբ: Ներդրումներ են համարվում բաժնետոմսերը, պարտատոմսերը, վարկերը, ավանդները, բանկային հաշիվները, դեբիտորական, կրեդիտորական պարտավորությունները և այլն:

Օտարերկրյա ներդրում է համարվում որևէ կազմակերպության և ոչ ռեզիդենտ միավորների միջև ներդրումների ցանկացած տեսակը (ներառում է ինչպես ոչ ռեզիդենտ կազմակերպությունում իրականացված ներդրումները, այնպես էլ այլ երկրներում անշարժ գույքի ձեռքբերումը և ոչ ռեզիդենտի կողմից իրականացված ներդրումները): ՀՀ վիճակագրական կոմիտեն օտարերկրյա ներդրումները բաժանում է երեք խմբի՝ օտարերկրյա ուղղակի ներդրում, պորտֆելային ներդրում և այլ ներդրումներ:

Օտարերկրյա ուղղակի ներդրումը (ՕՈՒՆ) մի երկրի ռեզիդենտի (ռեզիդենտների) կողմից այլ երկրի ռեզիդենտ կազմակերպության կապիտալում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կամ բաժնեմասի 10% և ավելի ձեռքբերումն է, ինչպես նաև այդ ներդրողների ու դրանց հետ կապված կազմակերպությունների հետ ֆինանսական բոլոր պահանջներն ու պարտավորություններն են: Ուղղակի ներդրումային հարաբերություններն առաջանում են հետևյալ դեպքերում՝

- 1) երբ օտարերկրյա ներդրողը ներդրումներ է իրականացնում կազմակերպության կապիտալում՝ տնօրինելով կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կամ փայամասնակցության 10%-ը և ավելին,
- 2) երբ կազմակերպությունը ներդրումներ է իրականացնում ոչ ռեզիդենտ կազմակերպությունում՝ տնօրինելով այդ կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կամ փայամասնակցության 10%-ը և ավելին,
- 3) երբ կազմակերպությունում ներդրումներ է իրականացնում (կամ կազմակերպությունը ներդրումներ է իրականացնում) ոչ ռեզիդենտ կազմակերպությունը (կամ ոչ ռեզիդենտ կազմակերպությունում), որը փոխկապակցված է կազմակերպության հետ:

Պորտֆելային ներդրումը օտարերկրյա ներդրումն է որևէ կազմակերպության կապիտալում, մինչև 10% ձայնի իրավունք տվող բաժնետոմսերում և

⁴ <https://www.armstat.am/am/?nid=48&thid=bal>

փայամասնակցություններում, ինչպես նաև ներդրումները կազմակերպված կամ այլ ֆինանսական շուկաներում շրջանառվող պարտքային արժեթղթերում (պարտատոմսեր, պարտամուրհակներ, դրամի շուկայի գործիքներ, այլ պարտքային արժեթղթեր):

Այլ ներդրումները ներառում են ոչ ռեզիդենտների հետ իրականացվող բոլոր տեսակի ֆինանսական գործարքները, որոնք չեն հանդիսանում օտարերկրյա ուղղակի, պորտֆելային ներդրումներ կամ ֆինանսական ածանցյալ գործիքներ (կանխիկ դրամական միջոցներ, ավանդներ, վարկեր և փոխառություններ, ապրանքների և ծառայությունների դիմաց վճարվելիք/ստացվելիք գումարներ, ստացված/տրված կանխավճարներ):

Չուտ հոսքերը հաշվետու ժամանակաշրջանում օտարերկրյա ներդրումների գծով ստացումների և մարումների (չփոխել ՀՀ ռեզիդենտ ընկերությունների կողմից օտարերկրյա պետություններում իրականացված ներդրումային հոսքերի հետ) տարբերություններն են⁵:

Համախառն կուտակումը հիմնական միջոցների համախառն կուտակման և նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխության հանրագումարն է:

Հիմնական միջոցների համախառն կուտակումն իրենից ներկայացնում է ռեզիդենտ-միավորների կողմից ապագայում նոր եկամտի ստեղծման համար միջոցների ներդրումը հիմնական կապիտալի օբյեկտներում՝ արտադրության մեջ դրանք օգտագործելու ճանապարհով:

Նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխությունն ընդգրկում է արտադրական պաշարների, անավարտ արտադրության, պատրաստի արտադրանքի և վերավաճառքի համար նախատեսված ապրանքների պաշարների փոփոխությունը: Տվյալ ժամանակահատվածում պաշարների արժեքի փոփոխությունը հաշվարկվում է որպես ժամանակաշրջանի վերջում և սկզբում առկա պաշարների արժեքների տարբերություն՝ գնահատված դիտարկվող ժամանակահատվածի միջին շուկայական գներով՝ գների ազդեցությունը չեզոքացնելու նպատակով:

1.2. ՀՀ ներդրումային հոսքերի վիճակագրության համառոտ վերլուծություն

Խոսելով ներդրումների ներգրավման, գործարար միջավայրի զարգացման, կառավարության ներդրումային քաղաքականության և ներդրումներին աջակցող կառույցների գործունեության մասին՝ նախ և առաջ անհրաժեշտ է իրականացնել ներդրումային հոսքերի վիճակագրության վերլուծություն և ներկայացնել առկա միտումները:

⁵ Վերաբերում է նաև օտարերկրյա ուղղակի ներդրումներին:

Այսպես, օտարերկրյա ներդրումները (ֆինանսական պարտավորությունների զուտ ստանձնումը)⁶ 2016 թվականին կազմել են 1 216.5 մլն ԱՄՆ դոլար⁷, 2017-ին՝ 400.3 մլն դոլար⁸, 2018-ին՝ 811.2 մլն դոլար⁹: 2019թ. համադրելի ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել: Ընդհանուր առմամբ՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները 2016-ից հետո զգալիորեն նվազել են:


Աղյուսակ 1. Օտարերկրյա ներդրումների բացվածքը 2016-2018թթ., մլն ԱՄՆ դոլար

	ՕՈՒՆ	Պորտֆելային ներդրում	Այլ ներդրումներ
2016թ.	338.1	56.9	821.4
2017թ.	249.8	-56.8	207.3
2018թ.	254.3	-16.7	573.7

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Կարևոր ենք համարում ներկայացնել հատկապես 2018 թվականի ապրիլ-մայիսյան քաղաքական իրադարձություններից հետո օտարերկրյա ներդրումների դինամիկան, հիմնական միտումները և բացատրել դրանք պայմանավորող գործոնները:

Գծապատկեր 1. ՕՈՒՆ-ի ծավալները ըստ եռամսյակների, 2017-2019թթ., մլն ԱՄՆ դոլար



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

⁶ Խոսքը վերաբերում է բոլոր՝ իրական, ֆինանսական, պետական կառավարման և այլ հատվածներում իրականացված օտարերկրյա ներդրումներին:

⁷ https://www.armstat.am/file/article/sv_02_18a_420.pdf

⁸ https://www.armstat.am/file/article/sv_02_19a_420.pdf

⁹ https://www.armstat.am/file/article/sv_02_19a_420.pdf

2018 թվականին նախորդ տարվա համեմատ ՕՈՒՆ-ը կազմել են 254.3 մլն ԱՄՆ դոլար՝ 2017 թվականի նկատմամբ աճելով 1.8%-ով: ՕՈՒՆ-ի ծավալների աճ արձանագրվել է 2018 թվականի առաջին և երրորդ եռամսյակներում, իսկ 2019-ին՝ երկրորդ և երրորդ եռամսյակներում¹⁰:

Երբ դիտարկում ենք ՕՈՒՆ-ի բացվածքը 2017-2018թթ., ապա տեսնում ենք, որ 2018-ին ներդրումները հիմնականում իրականացվել են բաժնետիրական կապիտալում, իսկ 2017-ին՝ պարտքային գործիքներում:

Աղյուսակ 2. 2017-2018թթ. եռամսյակային ՕՈՒՆ-ի բացվածքը, մլն ԱՄՆ դոլար¹¹

	Ներդրում բաժնետիրական կապիտալում		Վերաներդրված եկամուտ		Ներդրում պարտքային գործիքներում ¹²	
	2017	2018	2017	2018	2017	2018
1-ին եռամսյակ	46,23	36,68	30,31	48,79	-8,58	8,73
2-րդ եռամսյակ	5,47	11,54	-26,51	9,92	50,14	-7,64
3-րդ եռամսյակ	-10,74	9,25	9,28	46,73	52,33	19,54
4-րդ եռամսյակ	24,11	107,75	-9,38	30,70	87,09	-67,76

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Վերաներդրված եկամուտը 2018թ. կազմել էր 136.14 մլն ԱՄՆ դոլար, որը պայմանավորված էր 2018-ի առաջին, երրորդ և չորրորդ եռամսյակներով, քանի որ երկրորդ եռամսյակում վերաներդրված եկամուտը կազմել էր ընդամենը 9.92 մլն ԱՄՆ դոլար: Հիշեցնենք, որ 2017թ. ծավալն ընդամենը 3.71 մլն ԱՄՆ դոլար էր: Այսպիսով, կարող ենք ասել, որ ՀՀ-ում գործող օտարերկրյա կապիտալով որոշ ընկերություններ 2018թ. նորից են ներդրել իրենց կողմից ՀՀ տարածքում ստացված եկամուտները: Չունենալով կոնկրետ տվյալներ ըստ ընկերությունների՝ վերջինս կարելի է պայմանավորել և՛ վստահության բարձրացմամբ, և՛ դրական սպասումներով, և՛ նախորդ տարի ստացված ավելի մեծ եկամուտներով կամ գործարար ծրագրերի առանձնահատկություններով, քանի որ ամենամեծ վերաներդրման ծավալները 2018-ին կատարվել են առաջին եռամսյակում:

¹⁰ 2019թ. 4-րդ եռամսյակի ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

¹¹ https://www.armstat.am/file/article/sv_02_19a_430.pdf

¹² Պարտատոմսեր, այլ արժեթղթեր (բացի բաժնետոմսերից), վարկեր, փոխառություններ, ավանդներ, այլ պահանջներ/պարտավորություններ, որոնք իրենցից ներկայացնում են պահանջներ/պարտավորություններ ուղղակի ներդրողի կամ նրա հետ կապված կազմակերպության նկատմամբ:

2018թ. պարտքային գործիքների արժեքը բացասական էր և կազմել էր 47.74 մլն ԱՄՆ դոլար: Բացասական արժեքը վկայում է այն մասին, որ այն ընկերությունները (կամ ընկերությունը), որոնք ներգրավել էին ներդրում պարտքային գործիքի միջոցով որոշակի ժամկետով, վերջինս լրանալուն պես (եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէր) վերադարձրել էին գումարները, կամ որոշակի մարումներ կատարել՝ ըստ կնքած պայմանագրի պայմանների: Հիշեցնենք, որ դեռևս խոսքը վերաբերում է բոլոր հատվածներում (իրական, ֆինանսական, պետական կառավարման և այլն) ներդրումների մասին:

Տնտեսության իրական հատվածին անցնելով՝ հարկ է նշել, որ օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերը 2016-ին կազմել են 81 581.3 մլն դրամ, որից օտարերկրյա ուղղակի ներդրումները՝ 62 679.3 մլն դրամ, 2017-ին համապատասխանաբար՝ 74 619.9 մլն դրամ և 93 043.9 մլն դրամ, 2018-ին՝ 27 581.4 մլն դրամ և 111 870.5 մլն դրամ: 2018-ին օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի մասով ունեցել ենք կտրուկ նվազում՝ 47 038.5 մլն դրամի չափով¹³:

2019 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով օտարերկրյա ներդրումների ծավալները կազմել են համապատասխանաբար 128 350.9 և 32 608.2 մլն դրամ:

2019 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով¹⁴ տնտեսության իրական հատվածում կատարված ՕՈՒՆ-ի զուտ հոսքերի ծավալները նվազել են 28 740.5 մլն դրամով՝ կազմելով 32 608.2 մլն դրամ՝ 2018 թվականի նույն ժամանակահատվածի 61 348.7 մլն դրամի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ 2019 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2018 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, մարումները գերազանցում են ստացումները, այսինքն՝ դուրս եկող կապիտալը գերազանցում է մուտք եղող գումարներին: Բացարձակ փոփոխության տեսանկյունից առավելագույն մեծությունն արձանագրվել է Ջերսիից եկող ներդրումների պարագայում՝ կազմելով (-20 640.0) մլն դրամ, քանի որ ՕՈՒՆ-ի զուտ հոսքը կազմել է 0 դրամ, որն առնչվում է հանքագործական արդյունաբերության հարակից գործունեությանը, մասնավորապես՝ Ամուլսարի հանքի շահագործման հետ կապված խնդիրներին:

¹³ https://www.armstat.am/file/article/sv_02_19a_420.pdf

¹⁴ https://www.armstat.am/file/article/sv_10_19a_420.pdf?fbclid=IwAR3ezlUikuOHREqOTvw6dxqroNPXVpQ-YmDplCdCl_akqG7moFudH9ce4dY


Աղյուսակ 3. Օտարերկրյա ներդրումները 2016-2018թթ., երկիր/ուլորտ կարվածքով, մլն ՀՀ դրամ

Ե Ր Կ Ր Ն Ե Ր	2016		2017		2018	
	ներդրում	ՕՈՒՆ	ներդրում	ՕՈՒՆ	ներդրում	ՕՈՒՆ
Ընդամենը	81 581.3	62 679.3	74 619.9	93 043.9	27 581.4	111 870.5
այդ թվում՝						
Ռուսաստանի Դաշնություն	-52,010	-26,290.5	-9,752	-12,073.1	43,507.1	60,194.3
<i>Ներդրման ճյուղերը</i>	հանքագործություն, էներգետիկա, մեծածախ առևտուր, հեռահաղորդակցություն		հանքագործություն, էներգետիկա, մեծածախ առևտուր, հեռահաղորդակցություն		հանքագործություն, էներգետիկա, մեծածախ առևտուր, հեռահաղորդակցություն	
Գերմանիա	-8,723	-571	2 931.6	14 419.0	-30,923	15 602.3
<i>Ներդրման ճյուղերը</i>	հանքագործություն		հանքագործություն		հանքագործություն	
ԱՄՆ	12 009.0	2 109.5	-2,069	593	1 472.8	1 388.3
<i>Ներդրման ճյուղերը</i>	էներգետիկա, կացության կազմակերպում, ծրագրային ապահովում		էներգետիկա, կացության կազմակերպում, ծրագրային ապահովում		էներգետիկա, կացության կազմակերպում, ծրագրային ապահովում	
Ֆրանսիա	3 604.8	3 385.9	-6,327	-6 088.2	-4,031	-4 213.1
<i>Ներդրման ճյուղերը</i>	ջրի հավաքում, մշակում և բաշխում, խմիչքների արտադրություն		ջրի հավաքում, մշակում և բաշխում, խմիչքների արտադրություն		ջրի հավաքում, մշակում և բաշխում, խմիչքների արտադրություն	
Լյուքսեմբուրգ	48 399.3	10 812.8	2 890.1	-21 891.2	1 724.6	-1 067.1
<i>Ներդրման ճյուղերը</i>	էներգետիկա		էներգետիկա		էներգետիկա	
Լիբանան	-17,284	-15 765.0	-6,849	-6 711.5	6 615.5	4 859.8
<i>Ներդրման ճյուղերը</i>	հեռահաղորդակցություն		հեռահաղորդակցություն		հեռահաղորդակցություն	
Արգենտինա	2 859.1	3 505.5	-3,890	2 940.9		
<i>Ներդրման ճյուղերը</i>	բուսաբուծություն և անասնաբուծություն, օդային տրանսպորտ		բուսաբուծություն և անասնաբուծություն, օդային տրանսպորտ		բուսաբուծություն և անասնաբուծություն, օդային տրանսպորտ	
Ջերսի	10 119.1	10 119.1	107 888.2	107 888.2	20 640.0	20 640.0
<i>Ներդրման ճյուղերը</i>	հանքագործություն		հանքագործություն		հանքագործություն	

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Ներկայացնենք իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերի դինամիկան 2018-2019թթ. հունվար-սեպտեմբերի տվյալներով՝ ըստ երկրների:

Գծապատկեր 2. ՕՈՒՆ-ի զուտ հոսքերը 2018-2019թթ. հունվար-սեպտեմբերին՝ ըստ երկրների¹⁵, մլն դրամ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Ինչ վերաբերում է ՀՆԱ-ի նկատմամբ հիմնական միջոցների համախառն կուտակմանը (կարծում ենք՝ ծրագրում այնուամենայնիվ նկատի են ունեցել համախառն կուտակումը, տե՛ս Աղյուսակ 4), ապա ՀՀ կառավարության ծրագրով սահմանված է, որ ցուցանիշը ծրագրի իրականացման ավարտին պետք է հասնի 23-25% մակարդակի¹⁶:

Աղյուսակ 4. Համախառն կուտակում/ՀՆԱ 2012-2018թթ., % ընդամենի նկատմամբ

	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Համախառն կուտակում	25.3	22.3	20.9	20.7	18.0	19.3	22.4
հիմնական միջոցների համախառն կուտակում	23.6	21.2	20.0	20.6	17.4	17.6	16.7
նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխում	1.7	1.1	0.9	0.1	0.7	1.6	5.7


¹⁵ https://www.armstat.am/file/article/sv_10_19a_420.pdf?fbclid=IwAR3ezlUikuOHREqOTvw6dxqroNPXVpQ-YmDplCdCl_akqG7moFudH9ce4dY

¹⁶ ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 47:

Աղյուսակից պարզ է դառնում, որ կառավարությունը նախ թիրախ է սահմանել 2012թ. մակարդակը: Ցուցանիշը մինչև 2016թ. զգալի նվազում է արձանագրել, իսկ 2017-ից սկսված՝ աճ: Ի դեպ, 2018թ. աճը եղել է զգալի՝ 3.1 տոկոսով: Սակայն, հիմնական միջոցների համախառն կուտակումը 2018-ին այնուամենայնիվ նվազման միտում է ցույց տվել, իսկ զգալիորեն աճել են նյութական շրջանառու միջոցների պաշարները: Հարկ է նշել, որ պաշարների այսպիսի շեշտակի աճը հատկանշական չէ մեր տնտեսության համար, իսկ պատճառների վերաբերյալ կառավարությունը հստակ պարզաբանումներ դեռևս չի ներկայացրել: Ինչևէ, *այս փուլում դեռևս հնարավոր չէ արձանագրել խոստման իրականացման կամ չիրականացման փաստը*:

Անդրադառնալով տնտեսության կառուցվածքի փոփոխություններին՝ առաջին հերթին հստակ չեն տնտեսության կառուցվածքի փոփոխման մեխանիզմները և քայլերի հաջորդականությունը, բացի այդ, համակարգային առումով բացակայում են այն միջոցառումները, որոնք կարող են դիտվել որպես տեխնոլոգիաների արդյունաբերության գերակայության խթանման միջոցառումներ: Եթե դիտարկում ենք ՀՆԱ-ի կառուցվածքը, ապա տեսնում ենք, որ օրինակ՝ 2018 թվականին ՀՆԱ-ի կեսից ավելին բաժին է ընկնում առևտրին և ծառայություններին:

Գծապարկեր 3. ՀՆԱ-ի կառուցվածքը 2018 թվականին¹⁷ (%)




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

¹⁷ <https://www.armstat.am/am/?nid=82&year=2018>

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի¹⁸ 2017թ. նկատմամբ ծառայությունները երկինչ աճ են գրանցել՝ 18,4%: Այս ոլորտում ամենամեծ տեսակարար կշիռ ունեն՝ մշակույթը, զվարճությունները և հանգիստը: Այս աճը հիմնականում ապահովել են բուքմեյքերական ընկերությունները և խաղերը: Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 1,563 տրլն դրամ (2017-ի նկատմամբ աճը կազմել է 4,1%): 2018 թվականի 2-րդ եռամսյակում, ապրիլ-մայիս ամիսներին, հանքարդյունաբերության ոլորտում գրանցվեց երկնիշ անկում: Միևնույն ժամանակ մշակող արդյունաբերությունը աճել է: Հանքարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում արձանագրված անկումը բացասաբար է ազդել նաև արտահանման ծավալների վրա՝ հանգեցնելով բացասական զուտ արտահանման մեծացման: Շինարարությունը 2018թ. կազմել է շուրջ 338 մլրդ դրամ, աճը՝ 5,5%: Շինարարության ծավալները բավական փոքր են՝ համեմատած մյուս ոլորտների հետ, և վերջինիս աճը գրեթե չի նպաստել 2018թ. տնտեսական աճին՝ 0,1%:

Դիտարկենք նաև 2019 թվականի երրորդ եռամսյակի նախնական տվյալներով ՀՆԱ-ի կառուցվածքը:

Գծապատկեր 4. ՀՆԱ-ի կառուցվածքը 2019թ. երրորդ եռամսյակի նախնական տվյալներով (%)¹⁹



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի

Ըստ վիճակագրական կոմիտեի հրապարակած ՀՆԱ-ի նախնական տվյալների²⁰ 2019 թվականի երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի

¹⁸ <https://www.armstat.am/am/?nid=202>
¹⁹ https://www.armstat.am/file/article/sv_10_19a_112.pdf
²⁰ https://www.armstat.am/file/article/sv_10_19a_112.pdf

համեմատ, ՀՆԱ-ն աճել է 7,9%-ով՝ կազմելով 1 տրլն 832,7 մլրդ դրամ: ՀՆԱ-ի հավելաճին առևտուրը և ծառայությունները նպաստել են՝ 4,99 տոկոսային կետով, արյունաբերությունը, ներառյալ էներգետիկան՝ 2,22 տոկոսային կետով, շինարարությունը՝ 0,35 տոկոսային կետով, գյուղատնտեսությունը, որսորդությունը և անտառային տնտեսությունը, ձկնորսությունը, ձկնաբուծությունը՝ -0,42 տոկոսային կետով՝ բացասաբար ազդելով հավելաճի վրա:

Այսպիսով, նկատելի է ՀՆԱ-ի կառուցվածքի անփոփոխությունը և կայունությունը, որտեղ շարունակում է ամենամեծ տեսակարար կշիռն ունենալ առևտրի և ծառայությունների ոլորտը: Թեև 2018 թվականից նոր կառավարության ծրագրային դրույթը հստակ սահմանում է ՀՆԱ-ի կառուցվածքի փոփոխության անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, հստակ չեն այդ փոփոխությունը ապահովող գործիքակազմը, ուղղությունը, ռազմավարությունը, ինչպես նաև շարունակվում է նախկին կառուցվածքով ՀՆԱ-ի հավելաճը և տնտեսական աճի սպառման կամ պահանջարկի գործող մոդելը, որը, անհրաժեշտ փոփոխություններ չկրելու դեպքում, չի կարող նպաստել գործարար միջավայրի զարգացմանը և ներդրումների մեծաձավալ հոսքերի ներգրավմանը:

Ամփոփելով ներդրումների վիճակագրության վերլուծությունը՝ կարելի է փաստել, որ **ընդհանուր առմամբ որևէ լուրջ դրական միտում այս ընթացքում չի արձանագրվել:** Փոքր-ինչ աճել են բոլոր հատվածների²¹ ընդհանուր ներդրումները 2018-ին, սակայն իրական հատվածում ինչպես 2018թ., այնպես էլ 2019թ., կտրուկ նվազել են ՕՈՒՆ-ը: **Լուրջ փոփոխություններ չեն նկատվում նաև ՀՆԱ-ի կառուցվածքում:**

Իսկ այժմ, խոստումների և կատարված (կամ չկատարված) աշխատանքների մասին:

1.3. ՀՀ կառավարության խոստումները, դրանց իրականացման հնարավորությունները, միջազգային փորձը և խոստումների իրականացման արդյունքները

Այս բաժնում փորձ է կատարվել վերլուծել ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության քայլերը կամ գործողությունները հետևյալ տրամաբանությամբ. ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված ՀՀ կառավարությունը ի՞նչ քաղաքականություն է որդեգրել, ի՞նչ խոստումներ է տվել, արդյո՞ք որդեգրված քաղաքականությունը համահունչ է մեր իրականությանը, առկա ռեսուրսներին և միջազգային փորձին և ինչպիսի՞ արդյունքներ են գրանցվել այս

21 Իրական, ֆինանսական, պետական կառավարման և այլն:

ուրրտում: Կարճ ասած՝ վերլուծվել է հետևյալ շղթան. խոստումներ - իրատեսականություն և միջազգային փորձ - կատարված աշխատանքներ - արդյունքներ:

Ներդրումների աճի ապահովմանն ուղղված ՀՀ կառավարության քայլերը հիմնականում սահմանված են ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» թիվ 65-Ա որոշման 5-րդ բաժնի 5.6-րդ մասում, ծրագրի այլ բաժիններում և «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրի «Տնտեսական բարեփոխումների առաջնահերթությունները» բաժնում:

1.3.1. Միջազգային վարկանշային ինդեքսներ

Ե՛վ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում, և՛ կառավարության 2019 թվականի ծրագրում հստակ ընդգծվում են միջազգային այնպիսի ինդեքսների կարևորությունը, որոնք հստակ թվային արդյունքներով ներկայացնում են ներդրումային քաղաքականության արդյունքները, գործարար միջավայրի զարգացման միտումները: Մասնավորապես.

- *Մշակել և ներդնել տնտեսական զարգացման սեփական ինդեքսը: Ապահովել միջազգային գնահատման վարկանշային սանդղակներում Հայաստանի դիրքի շարունակական առաջընթացը՝ որպես թիրախ սահմանելով զգալի բարելավում «Գործարարությամբ զբաղվելը», «Գլոբալ մրցունակությունը» և այլ զեկույցներում²²:*
- *«...տնտեսական քաղաքականության որակի և գործարար միջավայրի վրա դրա ազդեցության գնահատականները դիտարկվելու են միջազգայնորեն ընդունված և ճանաչում ունեցող ընդհանրական ինդեքսների միջոցով: Մասնավորապես, օգտագործվելու են Համաշխարհային տնտեսական ֆորումի Գլոբալ մրցունակության ինդեքսը և Ներառական զարգացման ինդեքսը, Համաշխարհային բանկի՝ «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի գնահատումը և այլն: Միաժամանակ, թիրախավորվելու են այն գործոնների բարելավման հարցերը, որոնք կարևորվում են նշված ընդհանրական ինդեքսների գնահատման մեթոդաբանությամբ» (ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 43):*

Այս խոստումները կարելի է բաժանել երկու մասի՝ **տնտեսական զարգացման սեփական ինդեքսի մշակում և միջազգային ինդեքսներում դիրքի բարելավում:**

Առաջինի մասով տարակուսանք է առաջացնում ինչ-որ սեփական ինդեքսի մշակման անհրաժեշտությունը, գործնական կիրառելիությունը և ամենակարևորը՝ դա անելու կարողությունը: Ավելի տրամաբանական կլիներ սկզբում գոնե զգալիորեն բարելավել դիրքերն արդեն իսկ առկա ինդեքսներում, ապա սահմանել առանձին

²² «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր, բաժին 6, կետ 16:

թիրախներ, որոնք, կարելի է ենթադրել, պետք է լինեին առավել հավակնոտ կամ առավել յուրահատուկ, քան աշխարհում ընդունվածները: **Արդյունքում, հասարակությունը դեռևս չի տեղեկացվել նմանօրինակ ինդեքսի հաջողությամբ մշակման և ներդրման մասին** (իհարկե չենք բացառում, որ նմանօրինակ աշխատանք իրականացվել է, սակայն գաղտնի է պահվում հասարակության լայն շերտերից, որը պետք է նշել՝ քիչ հավանական է և ոչ տրամաբանական):

Ինչ վերաբերում է տարբեր, մասնավորապես, «Գործարարությամբ զբաղվելը», «Գլոբալ մրցունակություն», «Տնտեսական ազատություն» և այլ ինդեքսներում Հայաստանի դիրքի բարելավմանը, ապա.

- «Գործարարությամբ զբաղվելը - 2020»²³ ինդեքսում Հայաստանը 190 երկրների շարքում զբաղեցրել է 47-րդ տեղը՝ «Գործարարությամբ զբաղվելը - 2019»²⁴ ինդեքսի 41-րդ հորիզոնականի փոխարեն: **Ակնհայտ է, որ մեծ հաշվով ոչինչ չի փոխվել:**
- «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակվող տնտեսական ազատության ինդեքսում, ըստ 2019թ. զեկույցի, Հայաստանը զբաղեցրել է 47-րդ հորիզոնականը, իսկ 2017-ին և 2018-ին՝ համապատասխանաբար 33-րդ և 44-րդ հորիզոնականները: **Ակնհայտորեն առկա է դիրքի վատթարացում, ինչի պատճառով էլ ենթադրաբար ՀՀ կառավարության կողմից ինդեքսի մասին չի խոսվում:**
- Գլոբալ մրցունակության 2017, 2018, 2019 թվականների զեկույցներում²⁵ Հայաստանը զբաղեցրել է համապատասխանաբար 73-րդ, 70-րդ և 69-րդ տեղերը, **ինչը, իհարկե, մի փոքր առաջընթաց է:**

Միջազգային ինդեքսներում ՀՀ դիրքի փոփոխությունների մասին մենք առավել մանրամասն անդրադարձել ենք «Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության գործունեության ուսումնասիրություն (2018-2019թթ. ժամանակահատված)» զեկույցում²⁶, հետևաբար այս փոփոխությունների պատճառների մասին այս փաստաթղթում առավել մանրամասն չենք անդրադառնա:

Ուրախալի է, որ նշված ժամանակահատվածում, «Moody's» և «Fitch» միջազգային վարկանշային կազմակերպությունները Հայաստանի վարկանիշը բարձրացրել են համապատասխանաբար Ba3 կայուն հեռանկարով և BB- կայուն հեռանկարով²⁷:

²³ <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/32436/9781464814402.pdf>

²⁴ <https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB2018-Full-Report.pdf>

²⁵ http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf

²⁶ https://www.luys.am/reports/d15d2e88e5f6697f00251.DoingBusiness_Report-editedPDF.pdf

²⁷ <https://tradingeconomics.com/armenia/rating>, <https://countryeconomy.com/ratings/armenia>

Այսպիսով, ամփոփելով խոստումների այս մասը, կարելի է փաստել, որ հիմնականում արձանագրվել են և՛ դրական, և՛ բացասական փաստացի արդյունքներ. խոստացված սեփական ինդեքսը չի մշակվել, հետընթաց է եղել «Գործարարությամբ զբաղվելը» և «Տնտեսական ազատություն» ինդեքսներում, իսկ առաջընթաց գրանցվել է Գլոբալ մրցունակության ինդեքսում, «Moody's»-ի և «Fitch»-ի վարկանիշներում: **Դեռևս բացակայում են օրենսդրավական այնպիսի փոփոխությունները, որոնք հնարավոր կդարձնեն հստակ և գործուն մեխանիզմներով թիրախավորել վերոհիշյալ ինդեքսների մեթոդաբանությամբ սահմանված գործոնները:**

Հաշվի առնելով, որ խոստացվել էր զգալի առաջընթաց, կարելի է խոստումը գնահատել հիմնականում չկատարված:

1.3.2. Հարկային և մաքսային ոլորտ

- բարենպաստ ներդրումային միջավայր ձեւավորելու համար նվազեցնելու ենք շահութահարկի, եկամտային հարկի եւ շահաբաժինների հարկման գործող դրույքաչափերը: Մասնավորապես՝ շահութահարկի գործող 20% դրույքաչափը իջեցնելու ենք՝ հասցնելով այն 18%-ի, ռեզիդենտների եւ ոչ ռեզիդենտների շահաբաժիններն այսուհետ հարկվելու են միասնական 5% դրույքաչափով: 2019 թվականից կսահմանվի եկամտային հարկի համահարթ 23% դրույքաչափ, ապա մինչեւ 2023 թվականը այն աստիճանաբար կնվազի մինչեւ 20% («Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր, բաժին 6, կետ 6):
- արդյունքում՝ Հայաստանում պետք է ձևավորվի **կապիտալի և աշխատանքի հարկման այնպիսի միջավայր**, որի պայմաններում ձեռնարկատիրական ակտիվների շահագործումը կապահովի առավել բարձր շահութաբերություն (ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 47):

Այս խոստման մասով քայլերը պարզ են, եկամտային հարկի և շահութահարկի դրույքաչափերի նվազեցումը, ոչ ռեզիդենտների շահաբաժինները 5% դրույքաչափով հարկվելը ամրագրվել են Հարկային օրենսգրքի փոփոխություններով, որոնք ուժի մեջ են մտել 2020թ. հունվարի 1-ից:

Ճիշտ է, հարկման դրույքաչափերը վերջիվերջո իջեցվեցին, սակայն ձեռնարկատիրական ակտիվների շահագործման առավել բարձր շահութաբերությունը շատ ավելի լայն հասկացություն է: Ընդհանրապես, միջազգային պրակտիկայում չի ողջունվում շահութաբերության բարձրացման լուծումը հարկերի մեխանիկական իջեցման միջոցով, հակառակ դեպքում զարգացած երկրներում ամենացածր հարկերը կլինեին: Ընդհակառակը՝ շեշտը դրվում է տարբեր գործիքներով (նոր տեխնոլոգիաների կիրառման, տեխնոլոգիական վերազինման, ձեռնարկությունների կարողությունների բարձրացման, ուսուցման և բազմաթիվ այլ միջոցներով) մրցունակության և

արդյունավետության բարձրացման միջոցով շահութաբերության ցանկալի մակարդակի ապահովման վրա: Իսկ հարկերի իջեցման ազդեցության գնահատականը առանձին հետազոտության առարկա է, և հետագա հաշվարկները ցույց կտան, թե որը կգերակշռի՝ հարկերի իջեցման դրական ազդեցությունը տնտեսության վրա, թե՛ բացասական ազդեցությունը բյուջեի մուտքերի վրա:

- *հարկային քաղաքականությամբ թիրախավորելու ենք գործարարի եւ ներդրողի համար արդար, ընկալելի եւ կանխատեսելի միջավայրի ստեղծում եւ գլոբալ աշխարհում երկրի մրցունակության եւ ներդրումային գրավչության բարձրացում («Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր, բաժին 6, կետ 5):*
- *հարկային օրենսգրքի բարելավմամբ սահմանելու ենք ընկալելի եւ կանխատեսելի հարկային կանոններ, որոնք ներդրումային ծրագրերի, ծախսերի եւ եկամուտների տնօրինման գործընթացներում նպաստելու են արդյունավետ որոշումների կայացմանը (<< կառավարության ծրագիր - 2019, էջ 66):*

Նախ հարկ է նշել, որ այս երկու դրույթները մեծ հաշվով նույն իմաստը և նշանակությունն ունեն: Կարելի է ենթադրել նաև, որ խոսքն առաջին հերթին գործնականում որոշ կոռուպցիոն դրսևորումների բացառման մասին է (ըստ գործարարների՝ որոշակի առաջընթաց այս առումով գրանցվել է): Ինչ վերաբերում է *ընկալելի եւ կանխատեսելի հարկային կանոններին և միջավայրին*, ապա միջազգային փորձը վկայում է, որ կանխատեսելի միջավայրը առաջին հերթին գործարարությանն առնչվող օրենքների (օրինակ՝ հարկային օրենսգիրք, մաքսային օրենսգիրք, ներդրումները կարգավորող օրենսդրություն և այլն) կայունությունն է, հարկային կանոնների և դրույքաչափերի **ոչ հաճախ ու քաղաքական նպատակներ չհետապնդող փոփոխությունները:**

- *...Ներդրումային գրավչության բարձրացման նպատակով հնարավորինս պարզեցնելու ենք մաքսային սահմանի անցման գործընթացը եւ նվազեցնելու ենք սահմանի անցման համար պահանջվող ժամանակը.. (<< կառավարության ծրագիր - 2019, էջ 67):*

Այս խոստման մասով, ընդհանուր առմամբ, վերջին ժամանակահատվածում որոշակի առաջընթաց գրանցվել է, և ըստ գործարարների՝ նախկինում առկա **որոշ կոռուպցիոն դրսևորումները նվազագույնի են հասել:** Սակայն հարկ է նշել, որ մաքսային գործընթացներում հիմնականում հնարավոր է նվազագույնի հասցնել մարդկային գործոնով պայմանավորված բացասական երևույթները, բայց ոչ գործընթացները և ընթացակարգերը (սրանք մեր երկրի պարագայում հիմնականում կախված են ԵԱՏՄ երկրների ընդհանուր որոշումներից), առավել ևս ոչ մաքսատուրքի

դրույքաչափերը, որոնք առաջին անհրաժեշտության ապրանքների համար բարձրացան՝ նախկինում կիրառված արտոնությունների ժամկետը ավարտվելու պատճառով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ չնայած որոշ վերապահումներին, հարկային և մաքսային ոլորտներում խոստումները կարելի է համարել հիմնականում կատարված: Որոշ խոստումներ էլ պետք է համարել նաև ոչ չափելի՝ դրանց ձևակերպումների ընդհանուր բնույթի և աշխատանքների՝ հիմնականում շարունակական բնույթի պատճառով:

1.3.3. Պետություն-մասնավոր գործընկերություն

ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագրում կարևորվում է պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) զարգացումը, մասնավորապես.

- ...Կառավարությունն արագացնելու է պետություն-մասնավոր գործընկերության իրավական կարգավորումների և դրանց կիրառության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը (ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 47):
- Մեծածավալ ներդրումներ ներգրավելու տեսանկյունից կարևորվելու է պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում ենթակառուցվածքային ծրագրերում օտարերկրյա ներդրումների ներգրավման հնարավորությունը... (ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 47):

Միջազգային փորձառությունը ցույց է տալիս, որ զարգացած ինստիտուցիոնալ և օրենսդրաիրավական դաշտի պայմաններում, ՊՄԳ ծրագրերը կարող են դրական ազդեցություն ունենալ տնտեսական զարգացման վրա: ՊՄԳ-ն մասնավոր և հանրային կողմերի միջև ենթակառուցվածքների և դրանց հետ կապված հանրային ծառայությունների մատուցման համար կնքված պայմանագրեր են, որտեղ ռիսկերի հիմնական մասը կրում է մասնավոր գործընկերը: ՊՄԳ-ն հաջողվում է հիմնականում այն երկրներում, որոնք հիմնվում են ամուր օրենսդրաիրավական դաշտի վրա, և ՊՄԳ-ով իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք ունեն հանրային բնույթ: Լայն կիրառություն ՊՄԳ-ները ստացել են Հնդկաստանում, Հարավային Կորեայում, Մեծ Բրիտանիայում, Չիլիում, Ավստրալիայում և այլուր:

ՀՀ կառավարության առաջին քայլը՝ ուղղված ՊՄԳ իրավական հիմքերի ստեղծմանը, 2017-ի նոյեմբերի 9-ին ՀՀ կառավարության նիստում հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության պետություն-մասնավոր գործընկերության քաղաքականություն» փաստաթուղթն էր ²⁸ : Դրանով կառավարությունը ստանձնեց ՊՄԳ-ի հետևողական, համակարգային մոտեցման և Հայաստանում դրանց իրականացման համար ամուր հիմքերի մշակման

²⁸ <https://mineconomy.am/media/9185/2703.pdf>

հանձնառությունը: 2019 թվականի հունիսի 28-ին ընդունվել է «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը²⁹, որը սահմանում է ՊՄԳ կարգավորման իրավական շրջանակը, ներառյալ՝ պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի մշակմանը և իրականացմանն առնչվող կանոնները և ընթացակարգերը, կառավարման ինստիտուցիոնալ շրջանակը, կիրառելի չափանիշները և ՊՄԳ-ներին առնչվող այլ հարցեր: Օրենքի հիմնական նպատակն է Հայաստանում հաջողակ ՊՄԳ ծրագրերի իրականացման նպատակով անհրաժեշտ օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի սահմանումը և ՊՄԳ միջազգային լավագույն փորձի ներդրման խրախուսումը: Օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 1-ից:

Սակայն, ընդունված օրենքն ունի որոշ անկատարություններ: Այսպես, օրենքում հստակ չի սահմանված մասնավոր գործընկերոջ ընտրության կարգը: Մասնավորապես, ըստ ընդունված օրենքի, իրավասու մարմինը մասնավոր գործընկերոջ ընտրությունը կատարում է մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգերին համապատասխան, սակայն այդ ընթացակարգերը առկա չեն օրենքում և այլ իրավական ակտերով նույնպես ընդունված չեն: Դեռևս ընդունված չեն օրենքից բխող մի շարք այլ ընթացակարգեր: Միաժամանակ, համաձայն «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի, մասնավոր գործընկերոջ ընտրությունը պետք է կատարվի «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Սակայն առավել արդյունավետ է ՊՄԳ օրենքի լրիվ առանձնացումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի չտարածումը ՊՄԳ օրենքի վրա: Հակառակ դեպքում առաջանում են էական հակասություններ, որոնք պարունակում են բազմաթիվ օրենսդրաիրավական անկատարություններ և առաջացնում են ռիսկեր:

Այսպիսով, ՊՄԳ ոլորտում առաջին հայացքից իրականացվել են օրենսդրաիրավական կարգավորմանն ուղղված ավարտուն քայլեր, մասնավորապես՝ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի ընդունումը: **Սակայն, դեռևս ընդունված չեն դաշտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերը, ինչն իր հերթին երկարաձգում է ՊՄԳ ծրագրերի իրականացման հնարավորությունները:**

1.3.4. ՀՀ ներդրումային միջավայրը կարգավորող օրենսդրաիրավական դաշտ և ներդրումային քաղաքականություն

Կառավարության ծրագրային մի շարք դրույթներ՝ կապված ներդրումային քաղաքականության հետ, արտացոլում են ներդրումային միջավայրը կարգավորող օրենսդրաիրավական դաշտում բարելավումների և լրացումների անհրաժեշտությունը:

- Պետք է զարգացվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք կխրախուսեն ներքին խնայողությունների ավելացումը և դրանց ներդրումների համար

²⁹ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=6677>

այլընտրանքային հնարավորությունների ստեղծումը: Հատուկ ուշադրություն կդարձվի օտարերկրյա ներդրումների պաշտպանության մեխանիզմների զարգացման հարցերին (ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 46):

- Օտարերկրյա ներդրումների արագացումը պահանջում է էապես բարձրացնել մրավոր սեփականության իրավունքների պաշտպանվածությունը: ...Կառավարությունը կարևորելու է ոչ միայն մրավոր սեփականության իրավունքների պաշտպանության իրավական կարգավորումների բարելավման հարցերը, այլև՝ դրանց պաշտպանության մեխանիզմների զարգացումը (ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 47):
- Իրականացնելու ենք ոլորտի զարգացմանը և ներդրումների ներգրավմանը ուղղված օրենսդրական բարեփոխումներ, միջազգային փորձի հիման վրա իրավական դաշտի կատարելագործում («Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր, բաժին 9):

Այսպիսով, «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում առկա խոստումները, առարկայանալով կառավարության ծրագրային դրույթներում, նախատեսել են այնպիսի բարելավումներ՝ կապված ՀՀ-ում մեծածավալ ներդրումների ներգրավման և գործարար միջավայրի զարգացման հետ, որոնք փոփոխություններ են կանխորոշում ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտում, մասնավորապես՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում:

ՀՀ կառավարությունը, անկախության ձեռքբերումից ի վեր, ներդրումային ոլորտում առաջնորդվում է «բաց դռների» քաղաքականության, ներդրումային գործունեության հետ կապված հարաբերությունների ազատականացման, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային և առավել բարենպաստության ռեժիմների ամրագրման, ներդրումների պատշաճ պաշտպանության և միջազգային պրակտիկայում ընդունված այլ սկզբունքներով: ՀՀ ներդրումային քաղաքականության հիմնական դրույթները սահմանված են 2015 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգում, որն այսօր էլ հիմք է ընդունվում ներդրումային քաղաքականության մշակման գործում:

ՀՀ-ում օտարերկրյա ներդրումները կարգավորվում են 1994 թվականին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով³⁰: Օրենքում վերջին փոփոխությունը կատարվել է 2007 թվականին³¹: Օրենքը սահմանում է ՀՀ տարածքում օտարերկրյա ներդրումների իրականացման իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմքերը և ուղղված է օտարերկրյա ներդրողների իրավունքների, օրինական շահերի, գույքի պաշտպանության ապահովմանը և այլն:

³⁰ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872>

³¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=34700>

Ներդրումային գրավչության մեծացման համատեքստում հատկապես կարևորվում է օտարերկրյա ներդրումների պաշտպանության պետական երաշխիքները, ինչպես նաև օրենքով սահմանված օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների և օտարերկրյա ներդրողների գործունեության պայմանները: «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը 1994 թվականին ընդունվելուց հետո էական փոփոխությունների չի ենթարկվել: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ներդրումների խթանման տեսանկյունից հատկապես կարևորվում են ներդրումների պաշտպանությունը (մեխանիզմներ, ռեժիմներ և այլն): 1992 թվականի սեպտեմբերին Հայաստանը միացել է Ներդրումային վեճերի կարգավորման կոնվենցիային (ICSID):³² Կոնվենցիան սահմանում է որոշակի պարտավորություններ և պաշտպանական միջոցներ, որոնց կոնվենցիայի անդամ պետությունները պետք է համապատասխանեն և իրականացնեն դրանք:

Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի³³ կողմից ՀՀ նախկին կառավարության հետ համատեղ ի հայտ են բերվել օտարերկրյա ներդրումների մուտքի և պաշտպանության հետ կապված որոշակի սահմանափակումներ: Դրանց թվին են դասվում՝

- Օտարերկրյա ներդրումների վերաբերյալ համապարփակ ներդրումային ռազմավարության բացակայությունը, որը թույլ կտար ի հայտ բերել ազգային համեմատական առավելությունները, պարզել ներդրումների առաջնահերթ ոլորտները,
- «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում ներդրողների պաշտպանության հստակ երաշխիքների բացակայությունը,
- Ներդրումային միջավայրի հետ կապված այլ սահմանափակումներ, որոնք խոչընդոտում են ներդրողների շրջանում վստահության ձևավորմանը (մասնավորապես՝ անհարկի և ծախսատար ստուգումներ և այլն):

Ընդհանուր առմամբ առաջարկվել է կատարել փոփոխություններ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում, մասնավորապես՝

- ներդնել առավել բարենպաստ և ազգային ռեժիմներ ամբողջ ծավալով, ինչը բացակայում է կամ մասնակի է գործում³⁴ 1994 թվականին ընդունված օրենքում,
- ներդնել արդար և հավասար վերաբերմունքի սկզբունքը և ներդրումների պաշտպանության նվազագույն ստանդարտները,

³² <https://icsid.worldbank.org/en/Documents/icsiddocs/ICSID%20Convention%20English.pdf>

³³ https://mineconomy.am/media/7487/nerdrumayin_barepoxumneri_qartez.pdf

³⁴ Գործող օրենքում առավել բարենպաստության ռեժիմ ընդհանրապես սահմանված չէ, իսկ ազգային ռեժիմը թեև քովանդակային գոյություն ունի, սակայն հստակ ձևակերպված չէ որպես ազգային ռեժիմ:

- նախատեսել պետության հետ առկա վեճերի լուծման ժամանակ այլընտրանքային միջոցների (արբիտրաժի) կիրառման հնարավորություն և այլն:

Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից տրված առաջարկների հիման վրա մշակված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը³⁵ ՀՀ նախկին կառավարության կողմից ՀՀ ԱԺ քննարկմանն էր ներկայացվել 2017 թվականին: Այդ նախագծով հստակեցվում էր «օտարերկրյա ներդրում» հասկացությունը, նախատեսվում էր ներդնել առավել բարենպաստ և ազգային ռեժիմներն ամբողջ ծավալով, ինչպես նաև արդար և հավասար վերաբերմունքի սկզբունքը և ներդրումների պաշտպանության նվազագույն ստանդարտները: 2018 թվականի ապրիլ-մայիսյան քաղաքական իրադարձություններից հետո, մինչև խորհրդարանական արտահերթ ընտրությունները, նախագիծը Ազգային ժողովի կողմից չի քննարկվել և հանվել է ԱԺ նիստերի օրակարգից: **Իսկ նոր կառավարության կողմից «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նոր նախաձեռնություններ դեռևս չեն իրականացվել, այսինքն՝ հարցը մատնվել է մոռացության:** Ուստի, դեռևս պահպանվում են օրենսդրաիրավական բացերը այս ոլորտում, ինչը էականորեն խոչընդոտում է ՀՀ-ում ներդրումային հոսքերի ապահովմանը և գործարար միջավայրի զարգացմանը: Այս ոլորտում նշված անգործությունը հակասում է կառավարության մի շարք դրույթներով առաջադրված անհրաժեշտություններին: Մասնավորապես՝ «...Հատուկ ուշադրություն կդարձվի օտարերկրյա ներդրումների պաշտպանության մեխանիզմների զարգացման հարցերին: Անհրաժեշտ է լինելու սրեղծել գրավիչ պայմաններ՝ օտարերկրյա կապիտալը Հայաստան բերելու համար»:

Նշված դրույթը հստակ սահմանում է օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը, բայց գործնականում չեն իրականացվում առարկայական քայլեր օրենսդրական փոփոխությունների մշակման և քննարկման, ինչպես նաև առկա բացերը վերացնելու համար անհրաժեշտ հետազոտությունների անցկացման նպատակով:

ՀՀ-ում ներդրումային ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտին զուգահեռ գործում են այլ իրավական ակտեր, որոնք առնչվում են ներդրումային ոլորտին: Օրինակ՝ ներդրողների համար արտոնություններ սահմանող՝

- «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը³⁶,
- «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքը և այլն:

³⁵ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=9100&Reading=0>

³⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=125851>

«Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2011 թվականին, և վերջին փոփոխությունը տեղի է ունեցել 2018 թվականի հոկտեմբերին: Օրենքը կարգավորում է ազատ տնտեսական գոտիների ստեղծման, կազմակերպման և լուծարման հետ կապված հարաբերությունները: Կատարված փոփոխությունից հետո օրենքը հստակ սահմանում է «ազատ տնտեսական գոտիների» ստեղծման հիմնական նպատակը, այն է՝ ներդրումների ներգրավման, նոր աշխատատեղերի ստեղծման, արտահանման խթանման միջոցով ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստելը: Կատարված փոփոխությունը հստակեցնում է օրենքում կիրառվող հասկացությունների սահմանումը, համապատասխանությունը ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով սահմանված առանձնահատկություններին: Ազատ տնտեսական գոտում հարկային, մաքսային և արժույթային կարգավորումների, ազատ տնտեսական գոտում գործող արտոնությունների սահմանումը, կատարված փոփոխություններից հետո, ավելի է հստակեցվել, համապատասխանեցվել է առկա իրողություններին, մասնավորապես՝ ԵԱՏՄ անդամ պետությունների տարածքում ընդհանուր սահմանված պայմաններից տարբերվող՝ առավել բարենպաստ պայմանների ստեղծումը և այլն:

Այս փոփոխությունները «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքում կարող են խթանիչ ազդեցություն ունենալ ներդրումային միջավայրի վրա, սակայն եթե գործուն քայլեր ձեռնարկվեն օտարերկրյա ներդրումների ոլորտը կարգավորող՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում առկա բացերը վերացնելու ուղղությամբ:

Հարկ է նշել նաև, որ վերոհիշյալ օրենսդրական փոփոխությունները նախաձեռնվել են նախկին կառավարության ժամանակ, իսկ օրենքն ընդունվել է դեռ նախկին ԱԺ կողմից: Ինչ վերաբերում է կոնկրետ ազատ գոտիների ակտիվությանը և նոր շահագործողների ներգրավմանը, ապա այս հարցում առաջընթաց կարծես թե չի գրանցվել. դեռևս չի գործում Մեղրու ազատ տնտեսական գոտին, որը գործարկվել էր 2017թ. դեկտեմբերի 15-ին, սակայն այնուհետև սառեցրել գործունեությունը: Շատ դանդաղ է առաջ շարժվում ՀՀ կառավարության 2018թ. օգոստոսի 30-ի թիվ 974-Ա³⁷ որոշմամբ ստեղծված «Էկոս» ազատ տնտեսական գոտին, որտեղ այս ժամանակահատվածում գրանցվել է ընդամենը 2 շահագործող³⁸:

Մյուս գործող ազատ գոտիներում ներդրողների, նոր շահագործողների ակտիվություն նույնպես չի նկատվում: Այսպես, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 231-Ա որոշմամբ³⁹ ստեղծված «Մերիդիան» ազատ տնտեսական գոտում ներկայումս գրանցված է 4 շահագործող, իշխանափոխությունից հետո գրանցվել է ընդամենը մեկ ընկերություն, մեկն էլ դուրս է եկել ազատ գոտուց: ՀՀ

³⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137765>

³⁸ <https://mineconomy.am/page/361>

³⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=107429>

կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի թիվ 785-Ա որոշմամբ⁴⁰ ստեղծված «Ալյանս» ազատ տնտեսական գոտում ներկայումս գրանցված է 18 շահագործող⁴¹, որից նշված ժամանակահատվածում է գրանցվել 5 շահագործող: Ինչպես տեսնում ենք, ազատ տնտեսական գոտիները զարգացում են կա՛մ նույն, կա՛մ ավելի դանդաղ տեմպերով:

Ինչ վերաբերում է *մտավոր սեփականության իրավունքների պաշտպանվածության իրավական կարգավորումների բարելավմանը*, ապա և՛ նախկինում, և՛ այսօր կան միջազգային փորձին համահունչ օրենսդրության փոփոխության առաջարկություններ, սակայն կարևորը *մտավոր սեփականության իրավունքների պաշտպանվածության էական բարձրացնելու հարցում օրենսդրության կիրարկումն է և մտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված քայլերի իրականացումը (դա է հատկապես կարևոր ներդրողների համար): Այս ուղղությամբ փոփոխություններ մինչև այսօր չեն իրականացվել, համակարգն աշխատում է այնպես, ինչպես աշխատել է մինչև իշխանափոխությունը:*

- *Կառավարությունը նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր: Այս նպատակին հասնելու և բարձր տեխնոլոգիաների զարգացումն ապահովելու համար կիրականացվեն նպատակային քայլեր, մասնավորապես՝*
 - *կատարել նպատակային ներդրումներ ուղղարդյունաբերական ոլորտում, ինչպես նաև ստեղծել նպաստավոր ներդրումային միջավայր մասնավոր ներդրողների համար՝ որպես առաջնային ուղղություններ նախորոշելով տեխնոլոգիական վերազինումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը և սպառազինության ու ուղղակի տեխնիկայի ներկրումներից կախվածության նվազեցումը» (ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 61):*

Այս ոլորտում բաց աղբյուրներից հասանելի տեղեկատվության համաձայն դեռևս խոշոր ներդրումներ չեն եղել:

- *Տնտեսական քաղաքականության հիմքում դնել արտահանմանը, զբաղվածության ընդլայնմանը, աշխատանքի խրախուսմանը միտված ներդրումային քաղաքականությունը (ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 40):*

Այս դրույթը, թերևս ամենակարևորներիցը պետք է լիներ ներդրումներ ներգրավելու տեսանկյունից: Իհարկե, ներդրումային քաղաքականությունը պետք է

⁴⁰ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95561>

⁴¹ <https://mineconomy.am/page/361>

միտված լինի արտահանմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և այլ բարի նպատակների համար, սակայն հարց է, թե ինչպես, ինչ միջոցներով ու քայլերով: Ներդրումներն առաջին հերթին կատարվում են շահույթի ակնկալիքով, այսինքն՝ պետք է բացահայտվեն այն ոլորտները, որտեղ մենք ունենք համեմատական առավելություններ, այնուհետև փորձել տարբեր գործիքների միջոցով խթանել այդ ոլորտների մրցունակությունը, բարձրացնել արտադրողականությունը, բարելավել բիզնես իրականացնելու ընթացակարգերը և այլն: Սրանից հետո ներդրումների, հատկապես օտարերկրյա ներդրումների համար ամենակարևոր գործոնը կայունությունն է՝ քաղաքական, մակրոտնտեսական, օրենսդրական կամ ավելի պարզ ասած՝ «խաղի հստակ կանոնները»: Վերջինիս դեպքում անգամ ոչ այնքան կարևոր է կանոնների լավ կամ վատ լինելը, այլ հստակությունը և անփոփոխությունը:

Ներդրումային քաղաքականության մասով վերջին շրջանում կառավարության կողմից որոշակի նախապատրաստական քայլեր ձեռնարկվել են, սակայն դրանք հատվածական և ոչ կանոնակարգված, հախուռն բնույթ են կրել: Որպես օրինակ՝ կարելի է արձանագրել ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (ՄԱԿԱԶՀ, UNCTAD) հետ համատեղ իրականացված վերլուծությունը⁴², սակայն այդ նախաձեռնությունը մնացել է անավարտ, և վերջինիս արդյունքներով իրականացվող աշխատանքների վերաբերյալ դեռևս ոչինչ հայտնի չէ:

Այդպես էլ նոր կառավարության կողմից չընդունվեց «Օտարերկրյա ներդրումների մասին» նոր օրենքը, չներդրվեցին ներդրողների պաշտպանության մեխանիզմներ, դատական համակարգում տեղի չունեցան անհրաժեշտ փոփոխություններ, չմշակվեց ու չներկայացվեց ներդրումային քաղաքականության ռազմավարություն: Ավելին, փակվեց ներդրողներին աջակցող կառույցը, ամիսներ հետո բացվեցին անհասկանալի գործառույթներով և դեռևս հասարակությանը հստակ չներկայացված կառույցներ, որոնց մասին մանրամասն կխոսվի հաջորդ մասում:

Ամփոփելով կարելի է փաստել, որ ներդրումային քաղաքականության մշակման, ներդրումային միջավայրը կարգավորող օրենսդրահրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ գործնականում գրեթե ոչինչ չի արվել, այս մասով խոստումները դեռևս չեն իրականացվել:

1.4. Ամփոփում (միջանկյալ եզրակացություններ)

Ամփոփելով ՀՀ կառավարության ներդրումային միջավայրի և օրենսդրական դաշտի բարելավմանն ուղղված քաղաքականության վերլուծությունը՝ կարելի է փաստել, որ ընդհանուր առմամբ որևէ լուրջ դրական միտում այս ընթացքում չի արձանագրվել: Այսպես, ներդրումային քաղաքականության մշակման, ներդրումային միջավայրը

⁴² https://unctad.org/en/PublicationsLibrary/diaepcb2019d3_en.pdf

կարգավորող օրենսդրաիրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ գործնականում գրեթե ոչինչ չի արվել: Ավելին, ՀՀ կառավարությունը վերջին ամիսներին որդեգրել է այնպիսի մոտեցում, որ հետզհետե մոռացության է մատնվել ներդրումային ոլորտը և խոսակցությունները դրա մասին, և մեծ հաշվով կիրառվում է «չկա գլուխ, չկա գլխացավ» մոտեցումը: **Ներդրողների և ներդրումային ծրագրերի աննախադեպ քանակի փոխարեն ներդրումային ծրագրերի խթանման, նոր ներդրումային ծրագրերի նախաձեռնման, ներդրողների հետ աշխատանքների ոլորտում հիմնականում գրանցվել են բացասական արդյունքներ:**

Գրեթե նույն պատկերն է, փոքր-ինչ տարբերություններով, միջազգային վարկանիշներում և ՊՄԳ ձևավորման գործընթացում: Խոստացված սեփական ինդեքսը չի մշակվել, հետընթաց է եղել «Գործարարությամբ զբաղվելը» և «Տնտեսական ազատություն» ինդեքսներում, փոքր առաջընթաց է գրանցվել Գլոբալ մրցունակության ինդեքսում, «Moody's» և «Fitch»-ի վարկանիշներում: Դեռևս բացակայում են օրենսդրաիրավական այնպիսի փոփոխությունները, որոնք հնարավոր կդարձնեն հստակ և գործուն մեխանիզմներով թիրախավորել վերոհիշյալ ինդեքսների մեթոդաբանությամբ սահմանված գործոնները: Պետություն-մասնավոր գործընկերության ոլորտում առաջին հայացքից իրականացվել են օրենսդրաիրավական կարգավորմանն ուղղված քայլեր, մասնավորապես՝ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Սակայն դեռևս առկա չեն գնումների գործընթացը կարգավորող օրենսդրական լուծումները, ինչը նշանակում է, որ անհրաժեշտություն կա փոփոխություններ կատարել նոր ուժի մեջ մտած օրենքում, որն իր հերթին կերկարաձգի ՊՄԳ ծրագրերի իրականացման հնարավորությունները: Այս պարագայում կարևորվում է առկա բացերը վերացնելուն ուղղված հետևողական աշխատանքը՝ կապված հարակից իրավական կարգավորումների մշակման և միջազգային փորձից դրական զարգացումներին և իրողություններին համապատասխանեցնելու հետ:

Այս իրողությունները բնականաբար արտացոլվել են վիճակագրության մեջ: ՀՀ տնտեսության իրական հատվածում ինչպես 2018-ին, այնպես էլ 2019-ին կտրուկ նվազել են ՕՈՒՆ-ը: Այս մասով կառավարության աշխատանքը տապալվել է, սպասվելիք խոշոր հոսքերը ոչ միայն չեն իրականացել, այլև նվազել են:

Որոշակի լուսավոր կետ կարելի է համարել հարկային և մաքսային ոլորտները, որոնցում ձեռքբերումներ են գրանցվել և իրականացվել են խոստումները:

ՄԱՍ 2. ՆԵՐՂՈՒՄՆԵՐԻ ԽՔԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2.1. Ներդրումների խթանմանն ուղղված խոստումները, դրանց իրականացման հնարավորությունները, միջազգային փորձը և խոստումների իրականացման արդյունքները

Ներդրումների խթանումը ենթադրում է չորս հիմնական ուղղություն՝ ներդրումները խթանող ինստիտուտների (կառույցների) զարգացում, ներդրողների ներգրավում և ներդրումային ծրագրերի աջակցություն, համապատասխան ֆինանսական և ոչ ֆինանսական գործիքակազմի մշակում ու կիրառում և երկրի ճանաչելիության բարձրացում (որպես ներդրումների համար բարենպաստ հանգրվան): Հենց այս տեսանկյունից էլ կփորձենք վերլուծել ոլորտում տեղի ունեցած զարգացումները:

Մինչև կառավարության խոստումներին անցնելը, հարկ ենք համարում կարճ անդրադարձ կատարել միջազգային պրակտիկայում ընդունված ներդրումների խթանման փորձին:

Այսպես, միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցում է ներդրումային քաղաքականության մշակման և դրա իրականացման ու խթանման գործառույթները առանձնացնելը: Քաղաքականության մշակման համար հիմնականում պատասխանատու են լինում պետական գերատեսչությունները, իսկ ներդրումների խթանման համար՝ ավելի մոբիլ, առաջադեմ, պետական բյուրոկրատական մեխանիզմից հնարավորինս զերծ, հատուկ ստեղծված հիմնադրամները, գործակալությունները կամ կախված տվյալ երկրի օրենսդրությունից՝ այլ կազմակերպատիրավական տեսակի հիմնարկները, որոնք ընդունված է անվանել ներդրումների խթանման գործակալություններ (Investment promotion agency, IPA): Թերևս աշխարհում դժվար լինի գտնել մի երկիր, որը չունենա ներդրումները խթանող կամ գոնե ներդրումները և արտահանումը խթանող (IPA/EPA (export promotion agency) հատուկ կառույց: Անգամ գոյություն ունի ՄԱԿԱԶՀ-ի կողմից հիմնադրված նմանատիպ կառույցների համաշխարհային ասոցիացիա՝ The World Association of Investment Promotion Agencies (WAIPA), որը միավորում է տարբեր երկրների շուրջ 125 գործակալություններ: Այդ կառույցների կարևոր գործառույթներից են՝ երկրի իմիջի ձևավորումը, ներդրողներին աջակցությունը, հետներդրումային սպասարկումը (aftercare) և այլն⁴³:

Նշված գործառույթների իրականացման համար այս կառույցներին հատկացվում են զգալի գումարներ: Այսպես, համաձայն Տնտեսական համագործակցության և

⁴³ <http://documents.worldbank.org/curated/en/588311468780303317/pdf/271500PAPER0E1f0promotion0agencies.pdf>

գարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից իրականացված հետազոտության⁴⁴ ՏՀԶԿ երկրների ներդրումների խթանման գործակալությունների միջին տարեկան բյուջեն կազմում է շուրջ 69 մլն ԱՄՆ դոլար (առավելագույնը՝ 351 մլն ԱՄՆ դոլար):

Ներդրումների խթանման և աջակցության ֆինանսական և ոչ ֆինանսական գործիքակազմին կարելի է դասել լայն շրջանակ՝ սկսած ներդրումային արտոնություններից, վերջացրած ներդրողների շահերի առաջմղումով:

Երկրի ճանաչելիության բարձրացման միջոցառումներից են՝ ներդրումային համաժողովների, ներդրողների այցերի, ցուցահանդեսների կազմակերպումը, երկրի ներդրումային միջավայրի հնարավորությունների վերաբերյալ շնորհանդեսների, տպագիր նյութերի, տեսահոլովակների պատրաստումը և այլն:

Այժմ վերադառնանք ՀՀ կառավարության խոստումներին:

2.1.1. Ներդրողների հետ աշխատանքներ

- Հայաստանում ներդրումային որոշումների նախապայտրաստման փուլում, օտարերկրյա ներդրողների ժամանակային և ֆինանսական ծախսերը կրճատելու նպատակով, առաջարկվելու են «Մեկ կանգառի» ծառայություններ (ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 47):
- Օտարերկրյա ներդրողներին տրամադրվելու է նաև հեղինակային սպասարկման ծառայությունների որոշակի շրջանակ՝ տեղական միջավայրին հարմարվելու սահուն ընթացք ապահովելու նպատակով (ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 47):
- Մշտադիտարկելու ենք ներդրումային ծրագրերը եւ բացահայտված խնդիրների օպերատիվ լուծմամբ սահմանելու ենք հեղինակային սպասարկման պատասխանատու վարքագծի եւ գործընկերային հարաբերությունների բարձր նշածող («Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր, բաժին 6, կետ 18):
- «Հատուկ ուշադրության է արժանանալու պոտենցիալ ներդրողների նախնական ուսումնասիրությունների հետ կապված ծախսերի կրճատման և արդյունավետության բարձրացման հարցը...» (ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 47) :

Առաջին դրույթի մասով, կարծում ենք, ծրագիրը մշակողները ակնհայտորեն շփոթել են երկու հասկացություն՝ օտարերկրյա ներդրողներին աջակցող «Մեկ պատուհան» և հանրային ծառայությունները մատուցող «Մեկ կանգառ, մեկ պատուհան» հասկացությունները:

⁴⁴ <http://www.oecd.org/investment/investment-policy/mapping-of-investment-promotion-agencies-in-OECD-countries.pdf>

Միջազգային պրակտիկայում օտարերկրյա ներդրողներին աջակցող «Մեկ պատուհանի» տակ հասկանում են ներդրումները խթանող գործակալությունները, իսկ հանրային ծառայությունները մատուցող կազմակերպությունները, օրինակ, իրավաբանական անձանց պետական ռեգիստրում կամ անշարժ գույքի կադաստրում գործող մեկ պատուհանի սկզբունքով տարբեր պետական ծառայություններ մատուցող ստորաբաժանումներն են: Ենթադրում ենք, որ կառավարության ծրագրում նշված միասնական կառույցը պետք է առավելագույն ծառայություններ մատուցեր, սակայն մեր տեղեկատվությամբ այդպիսի կառույց չի ստեղծվել, իսկ օտարերկրյա ներդրողներին աջակցող «Մեկ պատուհանը» փակվել էր 2018-ին՝ դրա փոխարեն 1,5 տարի հետո՝ 2019 թվականի վերջերին ստեղծելով նորը: Թե ինչով էր պայմանավորված գործող կառույցի վերացումը և 1,5 տարի ներդրողներին անհասկանալի պատճառով աջակցության կասեցումը՝ անհասկանալի ու անտրամաբանական է: Իսկ գործող կառավարության կողմից այս հարցերին պատասխաններ չեն տրվել:

Ներդրումային ծրագրերի մշտադիտարկման, խնդիրների օպերատիվ լուծման, հետններդրումային սպասարկման մասով նախ հարց է ծագում, թե ո՞ր ներդրումային ծրագրերի մասին է խոսքը՝ պետական, թե՞ մասնավոր: Եթե խոսքը պետական ներդրումային ծրագրերի մասին է, ապա դա համապատասխան պետական մարմնի պարտադիր գործառույթն է, որի մասին կարիք չկա գրել կառավարության ծրագրում: Իսկ եթե խոսքը մասնավոր ներդրումային ծրագրերի մասին է (ենթադրաբար՝ այդպես էլ կա), ապա ի՞նչն է մշտադիտարկելու պետական մարմինը մասնավոր ծրագրերում: Եթե, այնուամենայնիվ, մշտադիտարկելը կապված է խնդիրների լուծման հետ, ապա ո՞ր մարմնին է լիազորություն տրվել օպերատիվ լուծելու խնդիրները: Օրինակ՝ միջազգային պրակտիկայում կիրառություն ունի «բիզնես օմբուդսմենի» ինստիտուտը, որը համապատասխան լիազորություններ ունի ազդելու տարբեր պետական մարմինների որոշումների վրա: Նմանատիպ մարմին կամ լիազորություններ Հայաստանում վերջին ժամանակահատվածում չեն ներդրվել: Ավելին, հաճախ հասարակությունը տեղեկանում է գործարարների բողոքներին առ այն, որ իրենց խնդիրները մնում են անարձագանք: Ի հավելումն նշվածի՝ ՀՀ վարչապետը վերջերս հայտարարեց. «Պետք է խոստովանել, որ այսօր մենք դեռևս չունենք ներդրումային առաջարկություններին բավարարագությամբ արձագանքող մեխանիզմ: ՊՎԾ-ին հանձնարարել եմ, որ ուսումնասիրություններ իրականացնի այս ոլորտում, որ հասկանանք, թե որտեղ, որ մարմիններում, կառույցներում պարզա՞ծ ձևով ընթացք չի տրվում ներդրումային առաջարկներին»⁴⁵:

Խնդիրը կայանում է հենց նրանում, որ ՀՀ կառավարությունում չկա հստակ պատկերացում, թե ինչպես է վերոհիշյալ խոստումն իրականացվելու: Ինչ վերաբերում է հետններդրումային սպասարկմանը, պետք է արձանագրել, որ միջազգային

⁴⁵ <https://armenpress.am/arm/news/995266.html>

պրակտիկայում հետներդրումային սպասարկումը հանդիսանում է ներդրումները խթանող գործակալությունների հիմնական ծառայություններից և մատուցվում է օտարերկրյա ներդրողներին⁴⁶: Այդ գործառույթը նախկինում ներդրված էր «Բիզնես Արմենիա» հիմնադրամում: Նույնիսկ ԵՄ կողմից տրվել էր անհրաժեշտ աջակցություն նշված գործառույթը կատարելագործելու և սպասարկման որակը բարձրացնելու նպատակով: Այսօր այս կառույցը մասնավոր է⁴⁷, իսկ տրամադրված գիտելիքները փոշիացվել են:

Ինչ վերաբերում է ներդրողների նախնական ուսումնասիրությունների հետ կապված ծախսերի կրճատման և արդյունավետության բարձրացման հարցին, ապա նախ հասկանալի չէ, թե այս դրույթով ինչ են նկատի ունեցել և ինչպես են պատրաստվել դա իրականացնել ծրագրի մշակողները: Հնարավոր է, որ օտարերկրյա ներդրողների համար «Մեկ կանգառ, մեկ պատուհան» կառույցն իր արդյունավետ աշխատանքով որոշակիորեն օգներ ներդրողներին նախնական ուսումնասիրությունների փուլում, սակայն այդ կառույցից հրաժարումը վկայում է, որ ծրագրի մշակողները այլ նպատակներ են ունեցել: Ինչևէ, այս ուղղությամբ տեսանելի ավարտուն քայլեր չեն իրականացվել:

Հաշվի առնելով վերագրյալը՝ ներդրումային ծրագրերի խթանման, նոր ներդրումային ծրագրերի նախաձեռնման, ներդրողների հետ աշխատանքների ոլորտում հիմնականում գրանցվել են էական հետընթաց և բացասական արդյունքներ՝ ակնկալվող բուժի փոխարեն:

2.1.2 Ֆինանսական և ոչ ֆինանսական գործիքակազմ

Ներդրումների խթանման ֆինանսական և ոչ ֆինանսական գործիքակազմի մշակմանը և կիրառմանը որոշ չափով կարելի է դասել ծրագրի հետևյալ դրույթները.

- *Քաղաքացիները պետք է ունենան հնարավորություն՝ ոչ ֆինանսական կազմակերպությունների պարտավորումների կամ բաժնետոմսերի ձեռքբերման միջոցով իրենց խնայողությունների դիվերսիֆիկացման և այդ եղանակով՝ ավելի բարձր եկամտաբերությամբ ներդրումների համար: Այլընտրանքային ֆինանսական գործիքների ընդլայնումը խրախուսելու հարցում (օրինակ՝ ներդրումային ֆոնդերի զարգացման միջոցով), այլ անելիքների թվում, կարևորվելու է նաև ոչ ֆինանսական հատվածի կազմակերպությունների կողմից Առաջնային հրապարակային տեղաբաշխման եղանակով (IPO) ծրագրերի ֆինանսավորման խթանումը (<< կառավարության ծրագիր - 2019, էջ 46):*

⁴⁶ https://unctad.org/en/Docs/iteipc20071_en.pdf

⁴⁷ 2019 թվականի հունիսի 7-ին ՀՀ կառավարությունը դադարեցրել է իր մասնակցությունը «Բիզնես Արմենիա» հիմնադրամի կառավարման խորհրդում և հանձնել այն մասնավորի կառավարմանը:

Ինչ խոսք, այս առաջարկը և՛ կարևոր է, և՛ նմանատիպ գործիքներ լայնորեն կիրառվում են միջազգային պրակտիկայում: Սակայն, կարծում ենք, որ ծրագրի մշակողներն այս դրույթը (խոստումը) ներառել են առանց հստակ պատկերացնելու, թե ինչ և ինչպես պետք է արվի՝ մեր իրականության մեջ ցանկալի արդյունքի հասնելու համար: Դեռևս հանրությանը չի ներկայացվել այս ուղղությամբ ձեռք բերված որևիցե արդյունք, խոստումն իրականացնելու ուղղությամբ որևէ քայլ դեռևս չի կատարվել:

- *Հայաստանի Հանրապետության տարածքներում տնտեսական ակտիվությունը խթանելու, տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման նպատակով՝ կգործարկվի ներդրումային ծրագրերի հարթակը և կստեղծվի ներդրումների խթանման նպատակով անհրաժեշտ տեղեկատվական հենք (ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 52):*

Կառավարության ծրագրով սահմանված է ներդրումային ծրագրերի հարթակի գործարկման կարևորությունը: Կարծում ենք՝ այս հարթակի գաղափարը վերցված է նախորդ կառավարության փորձից, սակայն, ինչպես նախորդ դեպքում՝ առանց գնահատելու վերջինիս անհրաժեշտությունը, արդյունավետությունը և իրականացնելու կարողությունը: «Իմ քայլը» հանուն մարզերի» գործարար համաժողովների ընթացքում հայտարարվեց, որ կառավարության հիմնական խնդիրն է գործընկերական կորպորատիվ համակարգի ներդրումը: Վերջինս պետք է իրականացվի կառավարության կողմից համաժողովների ընթացքում բոլոր բիզնես առաջարկների հավաքագրման և դրանց մասնագիտական փորձաքննության իրականացման միջոցով: Առկա պոտենցիալ ներդրումային ծրագրերի էլեկտրոնային հարթակը այն միջավայրը պետք է դառնար, որտեղ գործարարները հնարավորություն ունենանային «գտնել միմյանց»⁴⁸, և այն կարող էր էականորեն նպաստել ՀՀ գործարար միջավայրի զարգացմանը:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում բացվել է էջ՝ «Տարածքային ներդրումային համակարգ»⁴⁹ անվանմամբ, որտեղ առկա է մարզային ներդրումային ծրագրերի ենթաէջ (միայն հայերեն լեզվով), որը շատ վառ երևակայության դեպքում կարելի է համարել օտարերկրյա ներդրումներ ներգրավելու համար **ներդրումային ծրագրերի հարթակ**: Համեմատության համար կարելի է այցելել այլ երկրների ներդրումների ներգրավման կամ ներդրումային ծրագրերի կայքեր, օրինակ՝ <https://ec.europa.eu/eipp/desktop/en/index.html>, <http://gcfund.ge> և այլն, և գնահատել դրանց տարբերությունը հայկական ներդրումային հարթակից:

⁴⁸ <https://infocom.am/?p=3777&l=am>

⁴⁹ <http://www.mtad.am/hy/marznerdrum/>

- ստեղծել ազգային վենչուրային ներդրումային հիմնադրամ, որն ի վիճակի կլինի Հայաստանում գործունեություն ծավալող ստարտափներում կատարել անհրաժեշտ ներդրումներ՝ դրանց հետագա զարգացումն ու դեպի համաշխարհային շուկա ելքն ապահովելու նպատակով (ՀՀ կառավարության ծրագիր - 2019, էջ 61):

Մամուլում ժամանակ առ ժամանակ բարձրաձայնվում է, որ շուտով կստեղծվի ազգային վենչուրային ներդրումային հիմնադրամը. օրինակ՝ 2018թ. օգոստոսին⁵⁰, 2019թ. ապրիլին⁵¹: Սակայն իրական քայլերից կարելի է նշել, միայն Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (IBRD) կողմից Ազգային վենչուրային հիմնադրամի հարցերով կարճաժամկետ խորհրդատվություն տրամադրելու տեխնիկական առաջադրանքի կազմումը⁵²:

Կարելի է արձանագրել, որ ազգային վենչուրային ներդրումային հիմնադրամ դեռևս չի ստեղծվել:

2.1.3. Ներդրումների աջակցող պետական կառույցները և իրականացված քայլերը

- «Մեկ կանգառ, մեկ պատուհան» կառույցի գործարկմամբ ապահովելու ենք մեկ կետից ներդրողներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը եւ հանրային ծառայությունների մատուցումը («Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր, բաժին 6, կետ 17):

Թե՛ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում, թե՛ կառավարության 2019 թվականի ծրագրում հստակ ընդգծված է ՀՀ ներդրումային քաղաքականության համատեքստում ներդրումների ներգրավմանը և գործարար միջավայրին պետական աջակցության կարևորությունը: Այն ներառում է ոչ միայն ընդհանրական մոտեցում՝ վարվող քաղաքականության տեսքով, այլև տարբերակված և թիրախավորված մոտեցում, որոնք իրականություն կարող են դառնալ պետական կառույցների միջոցով: Այսինքն՝ այնպիսի կառույցների միջոցով, որոնք համագործակցում են մի շարք մասնավոր ընկերությունների հետ, և որոնց հիմնական նպատակն է բիզնես սուբյեկտներին աջակցության ցուցաբերումը՝ ներդրումներ ներգրավելու, կատարելու և գործարար միջավայրի զարգացման համատեքստում:

Լայն առումով Հայաստանի Հանրապետությունում ներդրումային արդյունավետ քաղաքականության հիմնական պատասխանատուն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է, որի գործառույթներից են ներդրումային քաղաքականությունը,

⁵⁰ <https://news.am/arm/news/466719.html>

⁵¹ <https://b24.am/business/76383.html>

⁵² [hti.am > edfiles > files > venchur](http://hti.am/edfiles/files/venchur)

գործարար միջավայրի բարելավումը, ՓՄՁ զարգացումը, միջազգային տնտեսական համագործակցությունը, պետություն-մասնավոր գործընկերությունը և այլն: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ներկայիս կառուցվածքով կազմամավորվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության միավորման արդյունքում՝ 2019 թվականի մայիսի 8-ին:

Կառավարության կողմից իրականացվող ներդրումային քաղաքականությանը, իրենց հիմնական գործառույթների շրջանակում, մասնակցում են նաև այլ գերատեսչություններ և կառույցներ:

Սակայն ներդրումների խթանման գործում կարևորվում է մասնագիտացված կառույցի առկայությունը: Նախկինում այդ գործառույթը վերապահված էր «Բիզնես Արմենիա» հիմնադրամին, որն իշխանափոխությունից հետո անհասկանալի կերպով դարձավ մասնավոր կառույց՝ կորցնելով պետական կարևոր գործառույթ իրականացնելու լիազորությունը: Հարկ է նշել, որ ընտրվեց հնարավոր լուծումներից ամենավատը: Պետական միջոցներով ստեղծված, այդ միջոցներով արդյունք ձևավորած, անհրաժեշտ կարողություններով օժտված աշխատող կառույցը կազմաքանդվեց և անհասկանալի, ոչ թափանցիկ և ոչ մրցութային գործընթացի արդյունքում տրվեց մասնավորին: Արդյունքում, փակվեց օտարերկրյա ներդրողների համար «Մեկ կանգառ, մեկ պատուհան» կառույցը, և ակնկալվում էր, որ համաձայն տրված խոստումների՝ կբացվի մեկ ուրիշը:

2019 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ⁵³ ստեղծվեց «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ն: Ընկերության հիմնական նպատակն է լինել Հայաստանի Հանրապետության ներդրումային հետաքրքրությունների առաջնղման առանցքային դերակատար՝ ռազմավարական ներդրումային ծրագրերի կառավարման, տնտեսության գերակա հոչակված ոլորտներում իրականացվող նախաձեռնություններում ներդրումների ներգրավման և ընդունելի ռիսկեր պարունակող գործարար ձեռնարկություններում մասնակցության միջոցով: Ընկերության հիմնական թիրախը խոշոր ներդրողներն են և խոշոր ներդրումային ծրագրերը: Ակնկալվող արդյունքն է խոշոր ներդրումային ծրագրերի կառավարման հետ կապված գործընթացներում կառավարությանն աջակցությունը: Մասնավորապես, հանդես գալով որպես կառավարության գործակալ, կատարել այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են՝ պետական ակտիվների կառավարումը, ներդրումային փաթեթների ձևավորումը, ներդրողների հետ աշխատանքը, խորհրդատվական ծառայությունների մատուցումը և այլն:

⁵³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130640>

Ուսումնասիրելով «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի գործունեությունը՝ պարզ է դառնում, որ այնուամենայնիվ, սա խոստացված «Մեկ կանգառ, մեկ պատուհանը» չէ: Ավելին, այս կազմակերպության գործունեության մասին դեռևս շատ բան հայտնի չէ, բացառությամբ մամուլում հրապարակված ինչ-որ հուշագրի ստորագրման մասին տեղեկատվության: Գործունեության և արդեն իսկ կատարված աշխատանքի մասին նաև չկարողացանք տեղեկատվություն գտնել կազմակերպության կայքում <https://www.anif.am/>⁵⁴:

Այնուամենայնիվ, կառավարության ծրագրի հաստատումից 1,5 տարի անց Հայաստանի «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի վերակազմակերպմամբ ստեղծվեց «Ներդրումների աջակցման կենտրոնը»⁵⁵ : Այս կենտրոնը Հայաստանում ներդրումներ իրականացնելու մտադրություն ունեցող տեղական և օտարերկրա գործարարներին պետք է տրամադրի համալիր աջակցություն մի շարք ուղղություններով: Մասնավորապես՝

- 1) ՀՀ ներդրումային հնարավորությունների և պայմանների, այդ թվում՝ պետական խթանների և այլ ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- 2) ուղեկցում ներդրումներ իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացներում, աջակցություն պետական մարմինների հետ աշխատանքներում,
- 3) ներդրումների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների, այդ թվում՝ առկա հողատարածքների և այլ անշարժ գույքի, օտարման ենթակա պետական սեփականություն հանդիսացող գույքի, համաֆինանսավորման աղբյուրների և հնարավոր ռեզիդենտ գործընկերների վերաբերյալ խորհրդատվություն,
- 4) հավանական ներդրողներին ներդրումային ծրագրերի տրամադրում՝ ըստ վերջիններիս հետաքրքրությունների շրջանակի,
- 5) ներդրումների իրականացման ընթացքում առաջացող խնդիրներին օպերատիվ արձագանքման ապահովում:

Հարկ է նշել, որ «Ներդրումների աջակցման կենտրոնը» վերոհիշյալ գործառույթները կատարելու համար առանձին ֆինանսավորում դեռևս չի ստանում, այն դեպքում, երբ «Բիզնես Արմենիա» հիմնադրամը նման գործառույթներ կատարելու համար պետական բյուջեից տարեկան ստանում էր մինչև շուրջ 1 մլրդ ՀՀ դրամ, ներառյալ պահպանման ծախսերը: Իհարկե, կարելի է ասել, որ սա տնտեսում է, սակայն իրականում այն պարզապես կարևոր գործառույթի ֆինանսավորման խնդրահարույց դադարեցում է էապես ավելացման փոխարեն:

⁵⁴ Ֆոնդը հիմնադրելու որոշմամբ կանոնադրական կապիտալը սահմանվել է 100 հազար դրամ: 2019 թվականի հունիսին հիմնադրամին հատկացվեց 240 մլն ՀՀ դրամ: Բայց այդպես էլ անհասկանալի է, թե ինչ նպատակներով է օգտագործվել հատկացված գումարը (չկա հրապարակված որևէ հաշվետվություն):

⁵⁵ <https://smednc.am/hy/programs>

«Ներդրումների աջակցման կենտրոնը» ՓՄՁ զարգացման համատեքստում պահպանել է իր գործառույթները և ունի աջակցության մի շարք ծրագրեր, մասնավորապես՝

- 1) Կարողությունների զարգացում,
- 2) Ֆինանսների հասանելիություն,
- 3) Բիզնեսի միջազգայնացում,
- 4) Միջազգային ծրագրեր:

Կարողությունների զարգացման համատեքստում իրականացվում են գործարար խորհրդատվություն, ուսուցողական և վերապատրաստման դասընթացներ, որոնք հանգեցնում են ՓՄՁ սուբյեկտների գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացմանը: Օրինակ՝ իրականացվում է «Հաջող սկիզբ» ծրագիրը, որը իրականացվում է սկսնակ գործարարների ձեռնարկատիրական կարողությունների զարգացման նպատակով, իսկ ՓՄՁ սուբյեկտների ուսուցման և վերապատրաստման ընթացքում հիմնականում իրականացվում են թեմատիկ, ոլորտային դասընթացներ թվային մարքեթինգի, նորարարությունների կառավարման, ֆինանսների կառավարման և այլ թեմաներով:

Ֆինանսական աջակցության ծրագրերը նպատակուղղված են սկսնակ գործարարներին և ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով գրավադրման խնդրի հաղթահարմանը, ՀՀ մարզերում, հատկապես սահմանամերձ համայնքներում ՓՄՁ սուբյեկտների վարկավորման հնարավորությունների ընդլայնմանը: Օրինակ «Հաջող սկիզբ» ծրագրով հավանության արժանացած իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած շահառուներին տրվում է ֆինանսական աջակցություն երաշխավորված վարկերի տեսքով՝ գործընկեր ֆինանսական կառույցների կողմից:

Բիզնեսի միջազգայնացման համատեքստում առաջ է քաշվում այն թեզը, ըստ որի՝ «աշխարհում ապրող 7,7 մլրդ սպառողներից ընդամենը մոտ 0,4%-ն է ապրում Հայաստանում, և եթե ցանկանում եք ընդլայնվել և ձեր ընկերության արտադրանքը կամ ծառայությունը հասանելի դարձնել ավելի մեծ քանակի սպառողների, մեծացնել շահույթը, կրճատել շուկայից կախվածությունը, ապա ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՐԵՔ ՁԵՐ ԲԻԶՆԵՍԸ»:

Այսպիսով, կարելի է փաստել, որ խիստ ֆորմալ առումով՝ ուշացումով, սակայն ստեղծվել է ներդրողներին աջակցության կառույցը: Իհարկե, դեռևս հնարավոր չէ գնահատել, թե ինչ կստացվի արդյունքում, սակայն մի բան պարզ է, որ նորաստեղծ կենտրոնը ներդրումների ներգրավման առումով՝ բաց թողնված ժամանակը հետ բերելու համար պետք է եռակի արդյունավետությամբ աշխատի:

Ներդրումների աջակցման պետական կառույցները հսկայական դերակատարում ունեն ՀՀ գործարար միջավայրի զարգացման և մեծածավալ ներդրումային ծրագրերի

ներգրավման հարցում: Անհրաժեշտ է հստակ ռազմավարություն նման հիմնադրամներին պետական աջակցության տարամադրման, որոշակի քանակական և որակական ստանդարտների մշակման, տեղեկատվական հարթակների ստեղծման մասին: Զարգացման այս փուլում կարևորվում է թիրախավորված մոտեցումը նման կառույցների հիմնման կամ մասնակցության դեպքում, քանի որ անհրաժեշտ է կառույցների գործունեության արդյունավետության բարձրացում և որակական չափանիշների սահմանում:

Այնուամենայնիվ, բաց է մնում «Բիզնես Արմենիա» հիմնադրամի մասնավորեցման հիմնավորվածության հարցը: Եթե խնդիրը օպտիմալացումն էր, ապա, սխալ լինելով հանդերձ, գոնե ձևավորված կարողությունները և իստիտուցիոնալ հիշողությունը պահպանելու նպատակով ինչո՞ւ այդ կառույցը չմիաձուլվեց ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամին, իսկ եթե նման կառույցի կարիք չկար, ապա ինչո՞ւ 1,5 տարի անց ՓՄՁ կառույցը վերանվանվեց (կամ վերակազմավորվեց) ներդրումների աջակցման կառույցի և այլն: Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ այս մասով հաճախ որոշումներն ընդունվել են բավարար չուսումնասիրված, չհիմնավորված և հանգեցրել են պետական համակարգի բնականոն գործունեության զգալի վատթարացման:

2.1.4. Երկրի ճանաչելիության բարձրացում

Երկրի ճանաչելիության բարձրացման հարցում հիմնականում կարևորվում է ներդրումների խթանման կառույցի դերը, սակայն այս գործառույթը հաճախ իրականացնում են այլ կառույցներ:

Ուսումնասիրելով, թե ինչ է իրականացվել վերջին տարիներին այս ոլորտում, հիմնականում կարելի է ընդգծել տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ իրականացված մարզային գործարար համաժողովները, որոնց հիմնական նպատակն էր, ըստ որոշակի թիրախային խմբերի, գործարարության խթանումը և մարզերի տնտեսության և համայնքների զարգացման գործընթացում Հայաստանում և արտերկրում ձեռնարկատիրությամբ զբաղվող և բիզնես շահեր հետապնդող գործարարների ներգրավումը: Նման համաժողովներ են շուրջ մեկ տարի մեկնարկած «Իմ քայլը» հանուն մարզերի» գործարար և ներդրումային համաժողովները: Օրինակ՝ «Իմ քայլը» հանուն Գեղարքունիքի» գործարար համաժողովի ընթացքում, որպես մարզի գերակա ուղղություն, ընտրվել է գյուղատնտեսությունը, տուրիզմը և վերականգնվող էներգետիկայի արտադրությունը: «Իմ քայլը» հանուն Շիրակի» համաժողովը ներառել է մարզի արտադրանքն ու սպասարկման ծառայությունները ներկայացնող ցուցահանդես և ներդրումային գաղափարների ներկայացում: Առաջարկվել է ձեռներեցներին մշակել բիզնես գաղափարներ և քննարկել ներդրողների հետ: «Իմ քայլը» հանուն Արագածոտնի» միջոցառումը քննարկումների և փորձի փոխանակման միջոցով

նպատակ է ունեցել աջակցել մարզում իրականացվող ներդրումային ծրագրերին, ստեղծել նոր գործարար կապեր, բացահայտել բիզնես ոլորտում առկա խնդիրները և այլն:

Իհարկե, նման գործարար և ներդրումային համաժողովները նպաստում են ներդրումների ներգրավմանը և տնտեսական հավասարաչափ զարգացմանը, սակայն անհրաժեշտ է հստակեցնել համաժողովների իրականացման արդյունքում ակնկալվող արդյունքները և դրանց իրագործման հստակ և գործուն մեխանիզմները, ինչպես նաև հետամուտ լինել համաժողովների արդյունքներին: Սակայն ներկայումս մի կողմից՝ տեսանելի չեն անցկացված համաժողովների արդյունքում սկսված բիզնես-գործընթացները կամ պոտենցիալ ներդրողների պատասխան քայլերը, և լայն առումով բացակայում է միասնական տեղեկատվական հարթակը՝ առնվազն երկլեզու տարբերակով: Մյուս կողմից՝ այս համաժողովները չեն կարող հանդիսանալ օտարերկրյա ներդրումների ներգրավման մեխանիզմ. առավելագույն լսարանը կարող են լինել տեղական գործարարները և սփյուռքահայերը, բայց ոչ օտարերկրյա՝ ազգությամբ ոչ հայ ներդրողները և ընկերությունները: Այս տեսակետից լուրջ բաց է նկատվում օտարերկրյա ներդրողների հետ աշխատանքներում:

2.2 Ամփոփում (միջանկյալ եզրակացություններ)

Ամփոփելով ներդրումների խթանմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության և իրականացված քայլերի ուսումնասիրությունը՝ կարելի է փաստել, որ չնայած այն հանգամանքին, որ որոշ հետաքրքիր և կարևոր դրույթներ, մասնավորապես՝ այլընտրանքային ֆինանսական գործիքների ընդլայնումը, IPO-ները խրախուսելու, ներդրումային ֆոնդերը զարգացնելու մասով ծրագրում առկա են, սակայն հարցականի տակ է նախ՝ այդ դրույթների իրականացումը, երկրորդը՝ այդ քաղաքականությունն իրականացնող մարմինների առկայությունը կամ արդյունավետ գործունեությունը:

Այս առումով կարևոր դեր պետք է ունենային ներդրումային ծրագրերի հարթակը և օտարերկրյա ներդրողների համար «Մեկ կանգառ, մեկ պատուհան» կառույցը:

Հարկ է նշել, որ ներդրումային ծրագրերի խթանման մասով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ստեղծված հարթակը, շատ վառ երևակայության դեպքում, կարելի է համարել օտարերկրյա ներդրումներ ներգրավելու համար ներդրումային ծրագրերի հարթակ:

«Մեկ կանգառ, մեկ պատուհան» կառույցը՝ «Ներդրումների աջակցման կենտրոնը» ստեղծվեց կառավարության ծրագրի հաստատումից միայն 1,5 տարի անց՝ արդեն իսկ գործող կառույցը անհասկանալի կերպով մասնավորին հանձնելուց հետո: Եվ մի բան պարզ է, որ նորաստեղծ կենտրոնը ներդրումների ներգրավման առումով՝ բաց թողնված

Ժամանակը հետ բերելու համար պետք է եռակի արդյունավետությամբ աշխատի: Ներդրումների աջակցման կառույցների գործունեության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այս ոլորտում առկա են որոշակի կատարված աշխատանքներ, սակայն դրանք բավական չեն Հայաստանում խոշոր ներդրումներ, մասնավորապես՝ օտարերկրյա ներդրումներ ակնկալելու համար:

Ներդրումների համար բարենպաստ երկրի ճանաչելիության բարձրացման ուղղությամբ ձեռնարկվել են որոշ քայլեր, կազմակերպվել են ներդրումային համաժողովներ՝ մարզային մակարդակով: Սակայն ներկայումս մի կողմից՝ տեսանելի չեն անցկացված համաժողովների արդյունքում սկսված բիզնես գործընթացները կամ պոտենցիալ ներդրողների պատասխան քայլերը: Մյուս կողմից՝ այս համաժողովները չեն կարող հանդիսանալ օտարերկրյա ներդրումների ներգրավման մեխանիզմ, քանի որ դրանց հիմնական լսարանը տեղական գործարարներ ու սփյուռքահայերն էին, բայց ոչ օտարերկրյա՝ ազգությամբ ոչ հայ ներդրողներ և ընկերություններ: Այս տեսակետից լուրջ բաց է նկատվում օտարերկրյա ներդրողների հետ աշխատանքներում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Իրականացված վերլուծությունը ներկայացրեց 2018 թվականի իշխանափոխությունից հետո ձևավորված ՀՀ կառավարության ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումների ներգրավման հետ կապված ծրագրային դրույթները և խոստումները, դրանց ուղղությամբ իրականացված քայլերը և միջոցառումները, ինչպես նաև արձանագրված արդյունքները: Կատարված աշխատանքի հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

- ՀՀ կառավարության ծրագիրը ներդրումների մասով մեծ հաշվով բարի նպատակների և իրար հետ հիմնականում կապ չունեցող գործողությունների համախումբ է: Ներդրումների ներգրավման տեսանկյունից ՀՀ կառավարության ծրագիրը համակարգված չէ, չունի իրարից բխող և փոխլրացնող դրույթներ:
- Կառավարության ծրագրի վերոհիշյալ բացթողումը չի նպաստում ներդրումային քաղաքականության ձևավորմանը, իսկ իրականացված քայլերը հախուռն են ու չհամակարգված: Ծրագրի մշակման ժամանակ հաշվի չեն առնվել առկա ռեսուրսները և հնարավորությունները, ինչը հանգեցրել է տրված խոստումների մեծ մասի չիրականացմանը:
- Թեև ներդրումների ներգրավումը հանդիսանում է կառավարության առաջնահերթություններից, 2018-2019 թվականներին կտրուկ նվազել են ՕՌԻՆ-ը, իսկ ՀՆԱ-ի կառուցվածքում լուրջ փոփոխություններ տեղի չեն ունեցել:
- ՊՄԳ ոլորտում թեև առաջին հայացքից իրականացվել են օրենսդրաիրավական կարգավորմանն ուղղված քայլեր, սակայն դրանք մնացել են անավարտ. ընդունված չեն դաշտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերը, ինչն իր հերթին երկարաձգում է ՊՄԳ ծրագրերի իրականացումը և հետևաբար՝ հավանական ներդրումները:
- Նոր կառավարության կողմից ոչ միայն կասեցվել է ներդրումների օրենսդրական դաշտի բարեփոխման աշխատանքները, այլև նոր նախաձեռնություններ չեն իրականացվել, և այդ հարցը մատնվել է մոռացության: Այսինքն՝ ներդրումային քաղաքականության մշակման, ներդրումային միջավայրը կարգավորող օրենսդրաիրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ կառավարության կողմից գործնականում գրեթե ոչինչ չի արվել:
- Չկան ներդրումների խթանման գործուն մեխանիզմներ. շուրջ 1,5 տարի հնարավոր և գործող ներդրողներին չի տրամադրվել որևէ աջակցություն՝ ներդրողների աջակցության «Մեկ պատուհանի» մասնավորեցման պատճառով: Ներդրումների աջակցման կառույցների գործունեության վերաբերյալ որոշումները ՀՀ կառավարության կողմից ընդունվել են բավարար չուսումնասիրված, չհիմնավորված և հանգեցրել են պետական համակարգի

բնականոն գործունեության զգալի վատթարացման, երկրի նկատմամբ ներդրողների վստահության նվազեցման:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ թեև կառավարության ծրագրով որոշ չափով նախատեսվում են ներդրումների ներգրավմանն ուղղված միջոցառումներ, գործնականում, սակայն, կառավարության քայլերը փոխկապակցված չեն՝ **շարժառիտ հակասելով ծրագրային խոստումներին** (դրա վառ օրինակն է ներդրողների աջակցության կառույցում մասնակցության դադարեցումը): Ավելին, տպավորություն է, որ **« կառավարությունը մոռացության է մատնել ներդրումների ներգրավման նպատակով տրված խոստումները և զբաղված է միայն ընթացիկ կարիքների բավարարմամբ՝ չմտածելով անգամ ուղղակի կառավարական պլանավորման մասին:**

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**